

## ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՁՆԵՐԸ ԿՈՉ Կ'ՈՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԵՒ ԹՈՒՐԹԻՈՅ՝ ՎԱԲԵՐԱՑՆԵԼՈՒ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Հայ-թրքական յարաբերու-  
թիւններու կարգաւորումը Միաց-  
եալ Նահանգներու համար շատ  
կարեւոր է», - Երկուշաբթի, Փետր-  
ուար 1-ին Ուաշինգթոնի մէջ տեղի  
ունեցած մամուլի ասուլիսի մը  
ժամանակ յայտարարած է Միաց-  
եալ Նահանգներու պետական քար-  
տուղարի Եւրոպայի եւ Եւրասիայի  
հարցերով տեղակալ Ֆրիլի Կորտըն:  
- «Նախապէս ըսած ենք եւ այժմ  
եւս կը վերահաստատենք, որ կող-  
մերը պէտք է յառաջ շարժին արձա-  
նագրութիւնները վաւերացնելու՝  
զանոնք կեանքի կոչելու ճամբով:  
Մենք հաւատացած ենք, որ ասիկա  
հնարաւորութիւն կու տայ երկու  
պետութիւններու միջեւ պատմա-  
կան իրական տարբերութիւնները  
այնպէս յաղթահարել, որ երկու  
կողմերն ալ կարողանան օգուտներ  
քաղել»:

«Երկու երկիրներու միջեւ նոր-

մալ յարաբերութիւններու հաստա-  
տումը եւ սահմանի բացումը կը  
նպաստեն տարածաշրջանէն ներս  
խաղաղութեան եւ կայունութեան  
հաստատման, եւ մենք կը կարծենք,  
որ այս գործընթացը պէտք է յառաջ  
շարժի՝ անկախ այլ հարցերէն,  
քանի որ այդ կը բխի երկու  
երկիրներու շահերէն», - աւելցու-  
ցած է ամերիկացի դիւանագէտը:

Ամերիկեան Գոնկրէսէն ներս  
չըջանաւորութեան մէջ զոտուող Հայ-  
կական Յեղասպանութեան բանաձե-  
ւի մասին հարցումի մը պատասխա-  
նելով Ֆրիլի Կորտըն ըսած է- «Ինչ  
կը վերաբերի ձեր յիշատակած  
օրինակներն, ապա այդ հարցի վերա-  
բերեալ նախագահ Օպամա արդէն  
իսկ յայտնած է իր տեսակէտը: Մեր  
մօտեցումը նոյնն է՝ հայ-թուրքա-  
կան յարաբերութիւններու բարելա-  
ւումը ինքնին դրական գործընթաց  
է, եւ այն պէտք է շարունակուի»:

## ՕՊԱՄԱ Կ'ԱՌԱՋԱՐԿԵ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՅԱՏԿԱՑՆԵԼ 40 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու  
նախագահ Պարաք Օպամա Գոն-  
կրէսի ներկայացուց 2011-  
թուականի տարեկան պիւտճէն,  
որուն մէջ առաջարկուած է  
Հայաստանին յատկացնել 40 միլիոն  
տոլարի արտաքին օժանդակութիւն:  
Անցեալ տարի ԱՄՆ-ի նախագահը

Հայաստանի համար առաջարկած  
էր 30 միլիոն տոլար, սակայն  
Գոնկրէսը այդ գումարը  
բարձրացուց 41 միլիոն տոլարի:  
Ներկայացուած պիւտճէնի մէջ  
Ատրպէյճանի համար նախատեսուած

Շաբ.ք էջ 4

## ՈՉ ԵՄ Է ՓՐՈՖ. ԳԵՈՐԳ ԽՐԼՈՒԲԵԱՆ

Սրտի խոր կսկիծով կը գու-  
ժենք Դոկտ. Փրոֆ. Գեորգ Խրլոբեա-  
նի դառնաղէտ մահը, որ պատահե-  
ցաւ Շաբաթ 30 Յունուար, 2010-ին  
յետ երկարատեւ հիւանդութեան:

Փրոֆ. Գեորգ Խրլոբեան ծնած է  
1927թ.ի Օգոստոս ամսուան 19ին,  
Սուրիոյ Հայկալ քաղաքի մէջ, ուր  
յաճախած է Ալեքսո Գոյէճ: Ներգաղ-  
թելով Հայաստան, ան իր ուսումը  
շարունակած է Երեւանի պետական  
համալսարանին մէջ, ուր հետեւած է  
հայոց լեզուի, հոգեբանութեան եւ  
տրամաբանութեան՝ ստանալով գի-  
տական եւ տրոֆորական աստիճան-  
ներ՝ գիտութիւններու եւ Հայ փիլի-  
սոփայութեան պատմութեան մէջ:

Ան ունի բազմաթիւ հրատա-  
րակութիւններ, որոնց շարքին՝ ու-  
սումնասիրութիւններ, քննարկում-  
ներ, հոգեւոր եւ ազգային բնոյթի  
խիզախ յօդուածներ, որոնք լոյս  
տեսած են մամուլի էջերէն:

Գեորգ Խրլոբեանի հիմնական  
հրատարակութիւնները եղած են՝  
«Անանիա Շիրակացիի Աշխար-  
հայեացքը» աշխատասիրութիւնը,  
«Հայ Ընկերային Իմաստասիրու-  
թեան Պատմութիւնը», Գրիգոր  
Նարեկացիի Հիւանդիգը», «Դպրո-  
ցի Կոմպլեքսային Դաստիարակու-  
թեան Սոցիալ Հոգեբանական Հար-  
ցեր», «Դաստիարակութեան Արդի  
Պատկերացումները», «Տէրունա-



կան Աղօթքի Մեկնութիւնը», «Եհո-  
վայի Վկաների Վարդապետութեան  
Քննարկման Վերլուծութիւն» մե-  
նագրութիւնները եւ բազմաթիւ  
այլ յօդուածներ:

Փրոֆ. Խրլոբեան երկար  
տարիներ աշխատակցած է  
նաեւ «Մասիս» շաբաթաթերթին:

Գեորգ Խրլոբեանի մահուան  
տիտուր առիթով, «Մասիս»-ի խմբագ-  
րութիւնն ու վարչական անձնա-  
կազմը իրենց ցաւակցութիւնները  
կը յայտնեն ողբացեալի այրիին՝  
երաժշտագիտուհի Տիկ. Անահի-  
տին, դուստրերուն եւ ընտանեկան  
բոլոր պարագաներուն:

## ԹՈՒՐԹԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԴԺԳՈՂ՝ ՄԻՆԱԿԻ ԽՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԵՆԵՆ

Թուրքիոյ վարչապետ Ռեշէփ  
Թայիփ Էրտողան յայտարարած է  
որ, ԵԱՀԿ-ի Մինսկի Խումբի հա-  
մանախազարէ երկիրները՝ Ռուսաս-  
տանը, Միացեալ Նահանգները եւ  
Ֆրանսան, անբարեխիղճ վերաբեր-  
մունք կը ցուցաբերեն Լեւոնային  
Ղարաբաղի հակամարտութեան  
լուծման հարցով:

Կիրակի, Յունուար 31-ին  
Թուրքիոյ պետական TRT հեռու-  
սիլի վրայ պատասխանելով լրագ-  
րողներու հարցերուն, Էրտողան  
ըսած է, որ Մինսկի Խումբի ջան-  
քերը արդիւնաւէտ չեն:

«Եթէ վերջին 20 տարիներու  
ընթացքին Ռուսաստան, Ֆրանսա  
եւ Միացեալ Նահանգները անհ-  
րաժեշտ միջոցներ ձեռնարկէին,  
Թուրքիան, Ատրպէյճանն ու Հա-  
յաստանը չէին ունենար յաջողու-  
ած խնդիրները», - ըսած է Թուրքիոյ  
վարչապետը՝ աւելցնելով, թէ Մի-  
ացեալ Ազգերու Կազմակերպու-  
թիւնը Հայաստանին «գրաւող»  
երկիր ճանչցած է, եւ եթէ Մինսկի  
համանախազարէ երկիրները բա-  
ւարար ճնշում գործադրէին Հա-  
յաստանի վրայ, Հայաստանը  
«գրաւեալ տարածքները» կը վե-  
րադարձնէր Ատրպէյճանին եւ  
խնդիրը արդէն լուծուած կ'ըլ-  
լար:

Էրտողան նաեւ յայտարարած  
է, որ Թուրքիոյ մէջ կ'ապրի 170  
հազար հայ, որոնց միայն 70  
հազարը Թուրքիոյ քաղաքացիներ  
են, իսկ մնացած 100 հազարը  
Թուրքիոյ մէջ կը բնակին ապօրի-  
նի: - «Մենք այս չենք նկատեր,  
քանի որ չենք ուզեր աւելորդ  
խոչընդոտներ ստեղծել, սակայն  
Հայաստան Թուրքիոյ ջանքերուն  
դրական պատասխան չի տար», -  
դժգոհելով ըսած է Էրտողան:

Անդրադառնալով հայ-թրքա-

## ԵՆԽՎ ՀԱՄԱՁԵԿՈՒՑՈՂՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ՅՍՏԱԿ ԺԱՄԿԵՏ

Եւրոպայի Խորհուրդի Խորհր-  
դարանական Վեհաժողովի (ԵՆԽՎ)  
Հայաստանի հարցով համագեկու-  
ցողներ ձոն Փրեւքոտ եւ Ժորժ  
Գոլոմպիէ նամակով դիմած են  
Հայաստանի Խորհրդարանի նա-  
խագահ Յովիկ Աբրահամեանին,  
պահանջելով՝ մինչեւ 2010-ի Մարտ  
17-ը Փարիզի մէջ կայանալիք  
Հսկիչ Յանձնաժողովի նիստը, բա-  
րեփոխումներու յստակ ժամկէտ-  
ներ:

ԵՆԽՎ պաշտօնական կայքէ-  
ջին վրայ հրապարակուած նամա-  
կը պարզ կը դարձնէ, որ Հայաստա-  
նի իշխանութիւնները անյապաղ  
բարեփոխումներ պէտք է իրակա-  
նացնեն 2008-ի Մարտի 1-2-ի դէպ-  
քերու պատճառները քննելու վե-  
րաբերեալ:

Ըստ համագեկուցողներու՝  
«յանձնաժողովի կողմէ առաջարկ-



Թուրքիոյ վարչապետ  
Ռեշէփ Թայիփ Էրտողան

կան արձանագրութիւններուն,  
Թուրքիոյ վարչապետը յայտարա-  
րած է, թէ Հայաստանը հայ-թրքա-  
կան յարաբերութիւններու կար-  
գաւորման լուրջ չի վերաբերիր,  
եւ Արձանագրութիւններու վերա-  
բերեալ Հայաստանի Սահմանադ-  
րական Դատարանի որոշումը  
Թուրքիոյ իշխանութիւններու մօտ  
տպաւորութիւն ստեղծած է, որ  
Հայաստան կը փորձէ ճշգրտումներ  
մտցնել:

Էրտողան ըսած է, որ թրքա-  
կան կողմը ստորագրուած արձա-  
նագրութիւնները ներկայացուցած  
է Խորհրդարան, եւ միայն խորհր-  
դարանը կրնայ որոշել՝ վաւերաց-  
նել զանոնք, թէ ոչ: Էրտողանի  
համաձայն, անհրաժեշտ է, որ Հա-  
յաստան դուրս գայ «գրաւեալ  
տարածքներէն»: - «Ես անձամբ  
այս հարցով աջակցութեան  
խնդրանքով դիմած եմ ԱՄՆ-ի  
նախագահ Օպամային, Ռուսաս-  
տանի նախագահ Մեդվեդեւին եւ  
վարչապետ Փուսինին: Հայաստա-  
նը պէտք է հաշուի առնէ, որովհե-  
տեւ մենք կատարած ենք արձա-  
նագրութիւններու հետ կապուած  
մեր պարտաւորութիւնները»:

Բարեփոխումները պէտք է  
ընդգրկեն ոստիկանութիւնը, ան-  
կախ դիտորդական մարմինները,  
հեռուստատեսութիւնը, ընտրական  
օրէնսգիրքը: Համագեկուցողները  
յայտնած են նաեւ, որ յստակ ժամ-  
կէտներ կը պահանջեն մինչեւ  
Հսկիչ Յանձնաժողովի նիստը:

«Մարտի 1-էն ետք շարք մը  
հարցեր կարիք ունին ճշգրտման», -  
ըսած են Փրեւքոտ եւ Գոլոմպիէ:  
Համագեկուցողները յայտնած  
են, որ մտադիր են զարման ալցել  
Երեւան եւ տեղուց վրայ ծանօթա-  
նալ իրավիճակին:

ՏԵՍԱԿԵՏ

ՕՐՈՒԱՆ ԸԱՐՅԵՐՈՒՆ ԸԵՏ  
ՆԱԽԱԳԱԸ ՕՊԱՄԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ

Անցեալ շաբաթ նախագահ Պարաք Օպամա ամերիկեան Գոնկրէսի առջեւ արտասանեց «Միութեան Իրավիճակի» աւանդական ճառը, որ նաեւ կը գուգադիպէր իր պաշտօնավարման առաջին տարուայ աւարտին:

Տարի մը առաջ ստանձնելով իր պաշտօնը, նախագահ Օպամա ոչ միայն դարձաւ Միացեալ Նահանգներու առաջին սեւամորթ նախագահը, այլ նաեւ, ան իր նախորդէն ժառանգեց 1930-ական թուականներէն սաղին տնտեսական մեծագոյն տագնապը:

Յունուար 27-ի ճառը ընդհանրապէս նուիրուած էր ներքին հարցերուն ու յատկապէս անգործութեան հարցին, որու յաղթահարումը նկատուեցաւ 2010 տարուայ համար առաջնահերթ թեման: Կարեւոր նկատուեցաւ նաեւ առողջապահութեան համակարգը բարելաւելու ձգտող ծրագրի Գոնկրէսի կողմէ վերջնական վաւերացումը:

Նախագահութեան առաջին 12 ամիսներուն, Պարաք Օպամա իր ժամանակի մեծ մասը տրամադրեց յատկապէս այս երկու նպատակներուն, հասնելով որոշ յաջողութեան, սակայն ոչ բաւարար՝ գոհացնելու Ամերիկայի ժողովուրդին, որ աւելի արագ եւ շօշափելի արդիւնք կ'ակնկալեր եւ աւելի արմատական փոփոխութիւններ կ'ուզէր տեսնել երկրի կառավարման գործին մէջ: Այս պատճառաւ, Օպամա շատ բան կորսնցուց իր ընտրութեան ընթացքին վայելած ժողովրդականութենէն եւ մի քանի մասնակի ընտրութիւններու ընթացքին նախագահի կուսակցութեան կրած պարտութիւնները եկան ցոյց տալու թէ, ինչպիսի տրամադրութիւն կը տիրէ ամերիկացիներու մօտ:

Սակայն պէտք է վերլուծել որ տարի մը առաջ, Ամերիկայի տնտեսութիւնը կը գտնուէր խիստ ծանր վիճակի մը մէջ: Իւրաքանչիւր ամիս 600-700 հազար ամերիկացիներ անգործներու շարքը կ'անցնէին, դրամատնային համակարգը փլուզման եզրին էր, արժեթուղթերու շուկան ամենօրեայ անկումի մէջ էր, հազարաւոր ամերիկացիներ չկարողանալով կատարել վճարումները կը կորսնցնէին իրենց բնակարանները, իսկ շուկայի վրայ առեւտուրը խիստ դանդաղած էր:

Այսօր, երկիրը մասամբ դուրս եկած է այդ վիճակէն: Մեծ դրամատուները սկսած են ետ վերադարձնել պետութեան կողմէ իրենց տրամադրուած գումարները, արժեթուղթերու գինները վերելքի մէջ են, փակուող գործատեղիներու թիւը նուազած է՝ հասնելով ամսական 100 հազարի շուրջ, բնակարաններու գինները կայունացած են եւ առեւտուրը կենդանութեան նշաններ ցոյց կու տայ:

Հակառակ դրական այս տեղաշարժերուն, Օպամայի վարչակարգը տակաւին երկար ճամբայ ունի կտրելիք՝ տնտեսութեան նկատմամբ ժողովուրդի վստահութիւնը վերականգնելու գծով: Այդ նպատակին հասնելու համար առաջին հերթին պէտք է ստեղծել նոր գործատեղիներ եւ այդ գծով մշակուած ծրագրերուն վրայ է

որ ծանրացաւ Օպամա իր ելույթի ընթացքին: Մինչեւ այն ատեն, որ իւրաքանչիւր տարւած ամերիկացիէն մէկը անգործ կը մնայ եւ կարգ մը նահանգներու մէջ անգործութեան տոկոսը կը հասնի 15 եւ աւելի տոկոսի, ժողովուրդի մեծ մասը պիտի շարունակէ մնալ թերահաւատ, որքան ալ լաւատեսութեան նշաններ երեւին հորիզոնի վրայ:

Իր ծրագրերներու իրականացման ճամբուն վրայ Օպամա գտնուեցաւ քաղաքական տհաճ իրականութեան մը առջեւ: «Փոփոխութիւն» կարգախօսին տակ պաշտօնի գալով, Պարաք Օպամա դժուարութիւններու հանդիպեցաւ մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ տիրող քաղաքական միջոցառումներու փոփոխութեան ենթարկելու եւ յօգուտ երկրին՝ երկու կուսակցութիւններուն միջոցէ համագործակցութեան միջոցով ստեղծելու գծով: Նախագահին կողմէ Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչներուն երկարած ձեռքը մնաց օդին մէջ, երբ այդ կուսակցութեան ղեկավարութիւնն ու Գոնկրէսի անդամները դարձան պատանդ իրենց կուսակցութեան մէջ բոյն դրած խումբ մը ծայրայեղականներուն, որոնք երբեք ալ չհաշտուեցան Օպամայի նախագահութեան գաղափարին հետ: Տիրող այս միջոցառումները վերածուեցան «ոչ»-ի կուսակցութեան, որ կը մերժէր նախագահի բոլոր ծրագրերն ու նախաձեռնութիւնները, նոյնիսկ երբ անոնց կողմէ ներկայացուող առաջարկները կը ներմուծուէին նոր մշակուող օրինակներու մէջ:

Պարաք Օպամայի նախընտրական ծրագրերներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւէր նաեւ առողջապահութեան ոլորտը եւ ան խոստացած էր բարեփոխումներ կատարելով պետական ապահովագրութիւն տրամադրել այն 40 միլիոն ամերիկացիներուն, որոնք մինչեւ օրս գուրկ կը մնան առողջապահական ապահովագրութենէ: Այս ծրագրի իրականացման ճամբուն վրայ եւս, նախագահ հանդիպեցաւ հանրապետականներու կտրուկ մերժումին եւ անոնց կողմէ ստեղծուած արհեստական խոչընդոտներուն: Հանրապետական կուսակցութիւնը ծանօթ է որպէս հարուստ դասակարգի եւ խոշոր ընկերութիւններու շահերու պաշտպան եւ ան իր կարելին կ'ընէ պահելու համար ներկայ վիճակը, քանի որ այդ խիստ ձեռնառու է ապահովագրական մեծ ընկերութիւններուն, որոնք չեն ուզէր տեսնել պետութեան մուտքը իրենց գործի դաշտին ներս:

Ներկայիս, առողջապահութեան նոր օրինագիծը մօտ է վերջնական վաւերացումի:

Հակառակ խանգարող բազմաթիւ ազդակներուն, Պարաք Օպամա իր պաշտօնավարութեան առաջին մէկ տարուայ ընթացքին կարողացաւ արձանագրել որոշ նուաճումներ: Ճիշդ է ան չկարողացաւ արագ լուծուածներ բերել բոլոր հարցերուն, սակայն յաջողեցաւ կայունացնել երկրի տնտեսութիւնը ու կը մնայ որ արդիւնքները աւելի զգալի դառնան պարզ ժողովուրդի առօրեայ կեանքէն ներս:

ՐԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԲԵՈՐ

ՅԱԿՈՒԲԱԴԱԼԵԱՆ

Էրդողանը դժգոհուած է ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքից եւ տրտնջում, որ Մինսկի խումբը Հայաստանին որեւէ զիջում չի պարտադրում: Դա երեւի թէ նշանակում է, որ Թուրքիան առաջիկայում չունի Ղարաբաղի հարցում որեւէ առաջընթացի յոյս, ինչն էլ իր հերթին նշանակում է, որ Սոչիի հանդիպումը, մագրիդեան պրիւսիանայի, դրա վերաբերեալ համարտ կողմերի դիրքորոշումների համար տրուած երկու շաբաթ ժամանակը իրենց մէջ որեւէ լուրջ բան չեն պարունակում, ու Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացը ոչ միայն վերջին, գուցէ նոյնիսկ հասարակածին էլ չի մօտենում:

Երբ յայտնուած է կարգաւորման մասին այդօրինակ կարծիք, այն իմաստով, որ Հայաստանին որեւէ մէկը որեւէ զիջում չի պարտադրում՝ գուցէ առաջարկում են, բայց չեն պարտադրում, ապա հնչում են գնահատականներ, թէ այդպէս ուղղակի հասարակութեան զգոնութիւնն է բթացում, հասարակութեանն այդպէս ներշնչում են, թէ իբր Ղարաբաղի կարգաւորման գործընթացում ամէն ինչ կարգին է, բթացում են մարդկանց զգոնութիւնը եւ այդպիսով հող են նախապատրաստում զիջումների համար:

Իրականում, նախ, երբ ասուում է, որ Հայաստանին զիջում չեն պարտադրում, դա ամենեւին չի նշանակում, որ Ղարաբաղի հարցում ամէն ինչ հայկական կողմի համար կարգին է ու մտածելու բան չկայ: Երկրորդ, եթէ շատ բան կարգին է, ապա դա ամենեւին հայկական կողմի շնորքը չէ, փայլուն դիւանագիտութեան արդիւնքը չէ: Պարզապէս Ղարաբաղի հարցի կարգաւորմանը ներգրաւուած գերտէրութիւնների շահը դասաւորուել է այնպէս, որ եթէ անգամ ցանկութիւն կայ փոխել ստատուս-քվոն, այդուհանդերձ նրանք գերադասում են պահպանել այն, եթէ փոփոխութեան "հրամանատարը" իրենցից մէկը չի լինելու, եթէ այդ փոփոխութիւնը չի ծառայելու միայն կամ առաւելապէս իրենցից մեկին: Ու քանի որ չկայ միանշանակ հրամանատար, չկայ կարգաւորման "կայսր" միջնորդ, ապա միջնորդները գերադասում են պահպանել ստատուս-քվոն:

Բայց դա ամենեւին չի նշանակում, որ Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում Հայաստանի համար ամէն ինչ լաւ է: Ու չի էլ կարող լաւ լինել: Եւ ոչ միայն Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում, այլ նաեւ հայ-թուրքական յարաբերութեան կարգաւորման գործընթացում, ինչպէս նաեւ արտաքին քաղաքական այլ գործընթացներում, որոնց մասնակից է կամ ներգրաւուած է Հայաստանը: Բանն այն է, որ պետութիւն հասկացութիւնը սկսում է երկրի ներսից եւ գնում է երկրի սահմանից ու գալիս դէպի ներս: Հետեւաբար, պէտք է տեսնել, թէ ինչ է Հայաստանի ներսից որպէս պետութիւն գնում դէպի դուրս:

Դէպի դուրս են գնում կեղծուած ընտրութիւնները, ոչ լեզիտիմ նախագահը, ոչ լեզիտիմ կառավարման համակարգը, իշխա-

նական ինստիտուտների սերտաձուձը քրէական եւ թաղային հեղինակութիւնների հետ, գործադիր իշխանութեան պատուէրներ կատարող դատական համակարգը, ապաքաղաքական խորհրդարանը, "գոնաների" ու քվոտաների բաժանուած տնտեսութիւնը, քաղաքական եւ տնտեսական մրցակցութեան բացակայութիւնը, ազատ խօսքի եւ քաղաքացիական ազատութիւնների սահմանափակումը, իշխանութեան առաջին դէմքերի, նրանց ենթակայների, նրանց հարազատների եւ բարեկամների արտօնեալ կարգավիճակը մնացեալ քաղաքացիների համեմատ, անպատժելիութեան միջոցառումը, ցանկացած իրական ընդդիմադիր գործունէութեան եւ այլախոհութեան հանդէպ տարբեր աստիճանի ռեպրեսիաներ՝ բնագործ աստիճանի հասցուած մեխանիզմի առկայութիւնը:

Ինչպէս կարող է որեւէ պետութեան գործ կարգին լինել արտաքին քաղաքական որեւէ հարթութեան վրայ, եթէ այդ պետութեան ներսից դուրս են գնում այդօրինակ իրողութիւնները, եթէ այդ պետութիւնն իր ներսում ունի այդպիսի ինդիւններ: Այդ պարագայում, եթէ դրսում ինչ որ բան լինում է կարգին, ապա այդ կարգինը հաստատ խիստ ժամանակաւոր է եւ խիստ յարաբերական:

Դրանից թերեւս բխում է, որ արտաքին գործերը կարգի բերելու ճանապարհը գտնուում է երկրի ներսում: Հասարակութեանը բթացում է ոչ թէ կարծիքը, որ արտաքին աշխարհը Հայաստանին զիջում չի պարտադրում, այլ այն համատարած պնդումները, թէ ուր որ է իշխանութիւնը յանձնում է Ղարաբաղը: Հասարակութիւնն

Շաբ-ը էջ 4

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ  
ԱՌՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՄՈՒՆՅԱՆ  
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
Յեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
3 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԳՆԱՑԻՆ ՄԵՂՍԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔԻ

«Ժառանգութիւն» կուսակցութեան հիմնադիր, նորանկախ Հայաստանի առաջին արտգործնախարար, Ազգային ժողովի պատգամաւոր («Ժառանգութիւն») Րաֆֆի Յովհաննիսեանը, խօսելով Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովում (ԵՆԽՎ) հայաստանեան պատուիրակութեան կազմի հետ կատարուածի մասին, ասաց. - «Թէ՛ Եւրոպայում, թէ՛ մեր երկրում վախկոտութիւնը եւ ունայնութիւնը տակաւին չափանիշներ են»:



«Ժառանգութիւն» հիմնադիր Րաֆֆի Յովհաննիսեան

«Եւ հենց այդ մտայնութիւնը, հենց այդ փոքրիկ տեսադաշտն է, այդ դաւային մեթոդաբանութիւնն է, որ ծնում է այն իրավիճակը, որ Եւրոպայում եւ Հայաստանում՝ որպէս Եւրոպայի մաս, լինում են քաղաքական բանտարկեալներ», - «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին ի պատասխան ասաց նա՝ շարունակելով. - «Որ Եւրոպայի կառուցների բարձրաստիճան պաշտօնեաներ են ընտրուում այն մարդիկ, ովքեր պաշտօնապէս ժխտում են Յեղասպանութիւնը մարդկութեան դէմ ոճիրները»:

Դիտարկմանը, որ «Ժառանգութիւն»-ը, ի թիւս հայաստանեան այլ քաղաքական ու հասարակական ուժերի, միացել էր Հայ Յեղափոխական Դաշնակցութեանը՝ հայ-թուրքական արձանագրութիւնների դէմ պայքարում, սակայն ԵՆԽՎ-ում երկու կուսակցութիւնների ներկայացուցիչները փոխադարձ մեղադրանքներով են հանդէս եկել, եւ հարցին, թէ արդեօ՞ք դրանից յետոյ կը շարունակուի «Ժառանգութիւն» - ՀՅԴ համագործակցութիւնը, Րաֆֆի Յովհաննիսեանը արձագանքեց. - «Եթէ Դաշնակցութիւնը եւ «Ժառանգութիւն»-ը քաղաքական հասուն ուժեր են... իրենք այս հարցին լուծում պէտք է գտան լինէին: Բայց, ցաւոք սրտի, Հայաստանի խորհրդարանը՝ իր ղեկավարութեամբ, նաեւ պատուիրակութեան անդամներով գնացին մեղակցային գործարքի եւ հաղորդակցութեան ուղիները բաց չպահուեցին»:

«Ես կարծում եմ՝ սրանք փոխկապակցուած ինդիւրներ են, եւ պայքարը, իհարկէ, շարունակուելու է», - յայտարարեց Յովհաննիսեանը՝ մանրամասնելով. - «Եւ սա միայն «Ժառանգութիւն» խմբակցութեան ինդիւրը, հարուածը, պայքարը չէ: Սա Հայաստանի ու իւրաքանչիւր հայ քաղաքացու արժանապատուութեան ինդիւր է՝ որ ինքը ներկայացուած լինի, որ իրենից ձայն, ներկայացուածութիւն եւ քուէի իրաւունք չվերցուի»:

ԶՈՒՐԱԲԵԱՆ ՍՈՒՐ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ Ե ԵՆԹԱՐԿՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՕ»: Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) համակարգող Լեւոն Զուրաբեանը Երեւնի քաղաքում, Փետրուար 2-ին սուր քննադատութեան ենթարկեց Հայաստանի իշխանութիւնների վարած արտաքին քաղաքականութիւնը՝ մասնաւորապէս հայ-թուրքական յարաբերութիւնների առումով:

հաշուարկել էր, որ, գնալով բարոյական տեսակէտից նման անընդունելի գործարքի, լուծելու է մի քանի ինդիւրներ»:

Հայաստանի իշխանութիւնները, նրա խօսքով՝ իրենց իսկ մեղքով, յայտնուել են այնպիսի իրավիճակում, որ տեղիք է տուել միջազգային հանրութեան «աննախադէպ ճնշումների» Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում:

Ընդդիմադիր գործչի մեկնաբանմամբ, եթէ իշխանութիւնների սցենարը իրագործուէր, ապա, Սերժ Սարգսեանի հաշուարկներով, Հայաստանի արժանանալու էր միջազգային հանրութեան աջակցութեանը, եւ կը թուլացուէին ճնշումները Ղարաբաղի հարցում, ինչպէս նաեւ՝ հայ-թուրքական սահմանի բացման պարագայում կ'ապահովուէր Հայաստանի զարգացման հեռանկարը՝ անկախ Ղարաբաղեան ինդրի լուծումից:

«Նման իրավիճակում Սարգսեանի վարչախումբը հանդէս եկաւ ճգնաժամը կարգաւորելու մի ծրագրով, այնպէս կոչուած՝ նախաձեռնողական արտաքին քաղաքականութեան շրջանակներում», - լրագրողների հետ հանդիպմանը ասաց Զուրաբեանը՝ պարզաբանելով, որ նկատի ունի Ձիւրիխում ստորագրուած հայ-թուրքական արձանագրութիւնները:

ՀԱԿ-ի համակարգողի գնահատմամբ՝ Հայաստանի իշխանութիւնների նախաձեռնութիւնը ձախողուել է. - «Այն, ինչ պիտի լինէր հայ-թուրքական հաշտեցման գործընթաց, վերածուել է, ըստ էութեան, հայ-թուրքական հակամարտութեան: Հնչում են արդէն փոխադարձ վիրաւորական արտայայտութիւններ եւ մեղադրանքներ: Եւ, փոխանակ մենք ունենայինք կարգաւորուած յարաբերութիւններ, մենք ունենք աւելի թշնամացած յարաբերութիւններ»:

Նրա խօսքով, այդ արձանագրութիւններով «ռեժիմը ընդունեց պատմական յանձնաժողով ստեղծելու թուրքիայի պահանջը՝ [հայ-թուրքական] սահմանը բացելու խոստման դիմաց». - «Ռեժիմը

թուրքիոյ դերը դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման գործընթացում այնքան է մեծացել, որ թուրքիան այսօր դե ֆակտո

ԶՈՐԵՐԻ ԶԱՐԱԶԱՏՆԵՐԸ ՊԱՐԱՆՁՈՒՄ ԵՆ «ՉՓԱԿԵԼ ՄԱՐՏԻ 1-Ի ԷՋԸ»



Մարտի 1-ի գոհեքու հարագատմերը պատասխան կը պահանջէն

Մարտի 1-ի գոհերի հարագատմերը Երկուշաբթի, Փետրուար 1-ին Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի առաջին օրը, մօտ մէկ ժամ կանգնեցին խորհրդարանի շէնքի մօտ՝ ակնկալիքով, որ օրէնսդիրները կը լսեն իրենց: Պատգամաւորներից որեւէ մէկը, սակայն, չմօտեցաւ նրանց:

Մէկ այլ գոհի՝ Տիգրան Խաչատրեանի մօր կարծիքով, իրենց հարցերի պատասխաններն իրենք կարող են ստանալ միայն իշխանափոխութիւնից յետոյ. - «Մենք սպասում ենք միայն իշխանափոխութեան, որովհետեւ հասկացանք, որ այս իշխանութիւնների հետ ոչ մի յոյս չենք կարող կապել»:

Սպանուածների ծնողները պատասխան էին պահանջում՝ ո՞վ եւ ինչո՞ւ սպանեց իրենց երեխաներին:

Մարտի 1-ին սպանուած Գոռ Քլոեանի հայրը իր խօսքն ուղղեց Եւրախորհրդում հայաստանեան պատուիրակութեան անդամներին, ովքեր, ըստ նրա՝ ամէն ինչ անում են Եւրախորհրդում իրենց երեխաների սպանութեան գործը կոծելու համար:

«Ինչի՞ համար սպանեցին իմ որդուն», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց սպանուած զինծառայող Տիգրան Աբգարեանի մայրը՝ Ռուզաննա Յարութիւնեանը. - «Որպէսզի արտակարգ դրութիւն մտցնեն: Իմ տղան չէ՞ որ զինուոր էր... Սահմանում եթէ գոհուած լինէր իմ տղան, ես կը հպարտանայի... Ոչ մէկը ոչ մի բան ինձ այդպէս էլ չասաց՝ ինչի՞ համար սպանուեց իմ որդին»:

ԵՆԽՎ-ում հայաստանեան պատուիրակութեան արդէն ոչ մշտական անդամ Զարուհի Փոստանջեանը («Ժառանգութիւն») «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցելով, որ առաջիկայում Հայաստան կը ժամանեն համագեկուցողներ Զոն Պրեսկոտն ու Ժորժ Կոլոմբիէն, յաւելեց. - «Հնարաւոր է, որ [ԵՆԽՎ-ի] գարնանային նստաշրջանը արդէն քննարկման առարկայ դարձնի Հայաստանում գործող դեմոկրատական ինստիտուտների հարցը, «Մարտի 1»-ի հարցը եւ այլ հարցեր, որոնք կապուած են մարդու իրաւունքների հետ»:

Նա ասաց, որ պահանջում է, որ իշխանութիւնները չփակեն «մարտի 1-ի էջը»:

Այսօր ԵՆԽՎ-ում հայաստանեան պատուիրակութեան անդամները լրագրողների հետ հանդիպմանը ամփոփել են անցած շաբաթ գումարուած նստաշրջանի արդիւնքները:

«Եթէ յանցագործները չեն պատժուել, ինչպէ՞ս են գործը փակում», - արցունքն աչքերին հարցնում էր գոհուած 18-ամեայ զինծառայողի մայրը:

ՀԱՅՊԱՆԵԱՆԻՆ ԱՐԳԵԼՈՒՄ ԵՆ

Մարտի 1-ին սպանուած Դաւիթ Պետրոսեանի մայրը՝ Զեմմա Վարդուհեանը, «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, թէ «իշխանութիւններ կոծկում են գործը», քանի որ իրենք «անգոր են»:

«Haynews.am»: ՀԱԿ-ի կենտրոնական գրասենեակը յայտարարութիւն է տարածել, որում ասուում է. «Հայ Ազգային կոնգրէսն իր վրդովմունքն է յայտնում այն առիթով, որ քաղաքականապէս Սարգիս Հացպանեանին հնարաւորութիւն է ի տրուած մասնակցելու իր հոր յուղարկաւորութեանը:

պումները՝ առանց լուրջ պատճառաբանութեան, չնայած այս դէպքում որեւէ լուրջ պատճառաբանութիւն չի էլ կարող լինել: Սրանով, ըստ էութեան, ոտնահարուում է կալանաւորի տարրական մարդկային իրաւունքը, նա ենթարկուում է հոգեբանական ճնշման ու խոշտանգման: Եթէ քրէակատարողական հիմնարկը չտայ Սարգիս Հացպանեանին իր ծնողի թաղման արարողութեանը մասնակցելու ու վերջին հրաժեշտը տալու հնարաւորութիւն, ուրեմն նա կատարում է վարչախմբի հերթական ճղճիմ պատուէրը»:

Հայաստանի քրէակատարողական հիմնարկներում ընդունուած կարգ է, որ նման դէպքերում կալանաւորին անհրաժեշտ չափով արձակուրդ է ձեւակերպուում: Արդէն աւելի քան երկու օր է, ինչ ձգձգում են անհրաժեշտ ձեւակերպ

ձեռք է բերել Մինսկի խմբի համանախագահի կարգավիճակ: «Զախողումը այս ռեժիմին դրել է մի ընտրութեան առջեւ: Այն է՝ կամ զիջումների գնալ Ղարաբաղի հար-

ցում, կամ բախուել տնտեսական ճգնաժամի այնպիսի խորացմանը, որը յղի է սոցիալական բռնատնրով», - յայտարարեց կոնգրէսի համակարգողը:

**ԼՈՒՐԵՐ**

**«ՍՏՐԱՏՖՈՐ» ԿԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ  
ՉԻ ԲԱՅԱՌՈՒԲՄ, ՈՐ ՂԱՐԱԲԱՂԵԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԱՆԿԱՌԱԿԱՐԵԼԻ  
ԲՆՈՅԹ ՍՏԱՆԱԼ**

«ԱԶՍՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Չի բացառուում, որ իրավիճակը  
Լեռնային Ղարաբաղում դուրս գա  
մեծ տեղում թիվները վերահսկող  
դուրս թիվները», - համոզված են ամե-  
րիկեան «Ստրատֆոր» վերլուծա-  
կան կենտրոնի փորձագետները:  
Նրանց պնդմամբ իրավիճակի  
լարուածութեան հիմնական պատ-  
ճառները են երկու կողմերից պար-  
բերաբար հնչող ռազմատեսչ յայ-  
տարարութիւնները:

«Նախկինում այդպիսի յայ-  
տարարութիւնները հիմնականում  
Ադրբեջանից էին լսուում, այսօր  
արդէն Հայաստանում էլ չեն բացա-  
ռում վերսկսման գործողութիւն-  
ների ուղղակի մասնակցութեան  
թիւնը», - կարծիք են յայտնել  
ամերիկացի փորձագետները:

«Ստրատֆորի» եւրասիական  
տարածաշրջանի խնդիրներով զբա-  
ղուող վերլուծաբան Մարկո Պա-  
պիչին ասում է. - «Ռուսաստանը,  
Թուրքիան եւ Իրանը մի օր կարող  
են յայտնաբերել, որ գործ ունեն  
այնպիսի հակամարտութեան հետ,  
որը դուրս է եկել իրենց վերահս-  
կողութիւնից»:

Պապիչի խօսքով, այս երեք  
պետութիւնները ուժեղացնում են  
իրենց դիրքերը տարածաշրջա-  
նում, եւ նրանց հետագայ գործակ-  
ցութեան ճակատագիրը մեծապէս  
կախուած է հենց Լեռնային Ղարա-  
բաղում ընթացող զարգացումնե-  
րից: «Ստրատֆորի» վերլուծա-  
բանները նշում են, որ ղարաբաղ-  
եան բանակցութիւնների ճակա-  
տագրի վրայ ազդող գործոնները  
մի քանիսն են. տարածաշրջանա-

յին գերտէրութիւն դառնալու՝  
Թուրքիայի ձգտումը, Ռուսաստա-  
նի ազդեցութիւնը Հարաւային Կով-  
կասում, Իրանի եւ Հայաստանի  
պատմականօրէն ձեւաւորուած դա-  
շինքը:

«Ռուսաստանը շահագրգռ-  
ուած է, որպէսզի Թուրքիան ներգ-  
րաւուր անյուշելի թուացող դա-  
րաբաղեան խնդրի կարգաւորման  
գործում: Այս ներգրաւուածու-  
թիւնը վատնում է Թուրքիայի  
ժամանակն ու կարողութիւնները  
մի տարածաշրջանում, որտեղ Ռու-  
սաստանն իրեն շատ ապահով է  
զգում: Թուրքիայի ակտիւութե-  
թիւնը չի նշանակում, որ Ռուսաս-  
տանը կարող է կորցնել Ադրբեջա-  
նի եւ Հայաստանի վրայ ունեցած  
ազդեցութեան լծակները: Աւելին,  
Ադրբեջանը կարծես դանդաղօրէն  
թեքում է դէպի Ռուսաստանը՝  
հայ-թուրքական բանակցութիւն-  
ների պատճառով իրեն դաւաճան-  
ուած զգալով», - նշում է Պապիչը՝  
չբացառելով, որ իրավիճակը տա-  
րածաշրջանում կարող է անկառա-  
վարելի բնոյթ ստանալ:

«Իրադարձութիւնները կարող  
են նման կերպ զարգանալ ոչ այն  
պատճառով, որ Ռուսաստանը, Իրա-  
նը կամ Թուրքիան դրան են ձգտում:  
Պարզապէս գոյութիւն ունի հակա-  
մարտութեան ներքին դինամիկա:  
Ստեղծուած կացութիւնը կարող է  
շատ նման լինել 1914 թուականի  
Բոսնիայի իրադրութեանը, երբ  
տեղական հակամարտութիւնը հա-  
մաշխահային պատերազմի ծագ-  
ման պատճառ դարձաւ», - նշում  
է ամերիկացի վերլուծաբանը:

**ԴԻՆՔԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻՑ  
ՄԵԿՆ ԱԶՍՏ Է ԱՐՁԱԿՈՒԵԼ**

«Haynews.am»: Ինչպէս հաղորդում է Zaman-ը, «էրզնէքոնի»  
գործով երեք մեղադրեալներ ազատ են արձակուել: Երեք մեղադրեալներ՝  
գիտնականներ էմին Գիւրսեսը եւ Ումիթ Սայընը, ինչպէս նաեւ  
Թուրքիայի գիտնական Ռեհմէթ Սուլեյմանը Երզնէի դատարանի  
որոշմամբ ազատ են արձակուել պայմանով, որ չեն լքի երկրի տարածքը:  
Ուշագրաւ է յատկապէս էմին Գիւրսեսի ազատ արձակումը, քանի  
որ բազմիցս նշուել է նրա կապը «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Դինքի  
սպանութեան հետ: Վերջինս դատալսումներից մեկի ժամանակ բացէիբաց  
յայտարարել էր, որ տեղեակ էր Հրանդ Դինքի դէմ պատրաստուող  
մահափորձի մասին եւ այդ տուեալներն անմիջապէս յայտնել էր  
համապատասխան մարմիններին: Հրապարակուել էր նաեւ մի  
հեռախօսազրոյցի գաղտնալսում, որում էմին Գիւրսեսը «էրզնէքոնի»  
գործով ձերբակալուած Թուրքիայի գիտնական Ռեհմէթ Սուլեյմանը  
Մուստաֆա Դինքի մեղքի մասին ասում էր, որ Դինքի սպանութիւնը շատ լաւ  
նախազգուշացում է նման մարդկանց համար:

**ԹՈՒՐՔ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՊԱՅԱՆՁՈՒՄ ԵՆ ԲԱՅԵԼ  
ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՍԱՅՄԱՆԸ**

«Tert.am»: Մինչ Երեւանի եւ Անկարայի միջեւ լարուածութիւն է  
նկատուում յարաբերութիւնների կարգաւորման գործընթացում, էրզրումցի  
գործարարները հանդէս են եկել յայտարարութեամբ՝ պահանջելով բացել  
Հայաստանի հետ սահմանադուռը:  
«Չի հան» գործակալութեան փոխանցմամբ՝ «Արեւելեան Անատոլիայի  
արտահանողների միութեան» նախագահ Զեմալ Շենգելը յայտարարել է,  
որ պէտք է անցեալում թողնել հայերի եւ թուրքերի միջեւ կատարուածը  
ու շարժուել առաջ:  
Զեմալ Շենգելի հաւաստմամբ՝ իրենք Հայաստանի հետ առեւտրի  
ծաւալները մեծացնելու նպատակով երկկողմ հանդիպումներ են  
իրականացնում եւ նոր նախագծեր պատրաստում:

**40 ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

Շարունակուած էջ 1-էն  
է 22,12 միլիոն տոլար արտաքին  
օժանդակութիւն:  
Հայաստանի եւ Ատրպէյճանի

ռազմական օժանդակութեան գծով  
նախատեսուած է իւրաքանչիւրին  
յատկացնել 3,5 միլիոն տոլար,  
պահպանելով երկու երկիրներու  
միջեւ հաւասարակշռութիւնը:

**ԹՐՔԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՀԱՄԱԶԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԵՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՅՑ ՅԱՅՏՆՈՒԵԼ Է ՊԱՏԱՅԻՆ  
ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ**

«Tert.am»: «Լոնդոնում Թուրք-  
իայի եւ Հայաստանի արտգործնա-  
խարարների միջեւ տեղի ունեցած  
հանդիպման արդիւնքների առնչու-  
թեամբ շրջանառուող լուրերը  
վկայում են այն մասին, որ Հայաս-  
տանի հետ յարաբերութիւնների  
կարգաւորման գործընթացը յայտն-  
ուել է պատային իրավիճակում», -  
գրում է թուրքական «Միլլիյէթ»  
օրաթերթի յօդուածագիր Սեմիհ  
Իդրիզը՝ աւելացնելով, որ ստեղծ-  
ուած իրավիճակում Թուրքիան  
դիւանագիտական տեսանկյունից  
այնքան էլ շահեկան վիճակում չէ,  
ինչպէս պնդում են Անկարայում:

«Երբ մեր արտգործնախարա-  
րութիւնը յայտարարեց, թէ Հայաս-  
տանի Սահմանադրական դատարա-  
նի որոշումը խարխուլ է բանակ-  
ցային գործընթացը, մենք կարծե-  
ցինք, թէ Անկարան դիւանագիտա-  
կան տեսանկյունից իրեն հօր է  
զգում... Սակայն արեւմտեան դիւա-  
նագետների յայտարարութիւններից  
երեւում է, որ դա այնքան էլ այդպէս  
չէ... Հայ-թուրքական յարաբերու-  
թիւնների կարգաւորման գործըն-  
թացի շահագրգիռ կողմերի արտ-  
գործնախարարները կամ արտաքին  
քաղաքական գերատեսչութիւնների  
բարձրաստիճան պաշտօնեաները  
հարցի առնչութեամբ հանդէս եկան  
իրենց դիրքորոշումները վերա-  
հաստատող յայտարարութիւններով,  
որոնցով ի ցոյց են դրում հետեւեալ  
երկու հիմնական իրողութիւնները.

1. Շահագրգիռ կողմերից եւ ոչ  
մէկը չի ընդունում Զիւրիխում  
ստորագրուած Արձանագրութիւն-  
ների կապը ղարաբաղեան հիմ-  
նախնդրի հետ: Ռուսաստանի արտ-  
գործնախարար Սերգէյ Լաւրովը  
նոյնիսկ յայտարարեց, թէ Անկարա-  
յի կողմից այդ գործընթացների  
շարժապտումը կրում է «արհեստա-  
կան» բնոյթ:
2. Շահագրգիռ կողմերը Հա-  
յաստանի Սահմանադրական դատա-  
րանի կայացրած որոշման առնչու-  
թեամբ համակարծիք են ԱՄՆ պետ-  
քարտուղարի տեղակալ Ֆիլիպ Գոր-  
դոնի հետ», - գրում է Սեմիհ Իդրիզը:  
Յիշեցնենք, որ օրեր առաջ  
Ֆիլիպ Գորդոնը դրական էր գնա-  
հատել Հայաստանի Սահմանադրա-  
կան դատարանի որոշումը:  
Թուրք յօդուածագիրը, խօսե-  
լով Թուրքիայի վարչապետ Ռեջէփ  
Թայիփ Էրդողանի՝ արձանագրային  
գործընթացում Անկարայի՝ Երեւա-  
նից մէկ քայլ առաջ լինելու վերա-  
բերեալ հնչեցրած յայտարարու-

թիւնների մասին, վկայակոչում է  
արեւմտեան դիւանագետներին եւ  
ընդգծում, որ այդ յայտարարու-  
թիւնները չեն համապատասխա-  
նում իրականութեանը:

«Միջազգային քամիները փչե-  
լու են ի նպաստ Հայաստանի:  
Վարչապետ էրդողանի՝ «Մենք մէկ  
քայլ առաջ ենք, որովհետեւ Արձա-  
նագրութիւնները ներկայացրել ենք  
խորհրդարանին» փաստարկն այն-  
քան էլ հիմնաւոր չէ: Մի դիւանա-  
գետ այդ յայտարարութեանը տա-  
լիս է հետեւեալ պատասխանը. «Կա-  
ռավարութիւնն այդ Արձանագրու-  
թիւնները վաւերացման համար  
ներկայացրել է խորհրդարան: Սա-  
կայն այդ ուղղութեամբ որեւէ ջանք  
չի գործադրում»: Իսկ սա այն  
դէպքում, երբ ՀՀ ՄԴ որոշումը  
որակում է որպէս շօշափելի քայլ՝  
ուղղուած գործընթացն առաջ մղե-  
լուն», - գրում է «Միլլիյէթի» յօդ-  
ուածագիրը:

Սեմիհ Իդրիզը, խօսելով նաեւ  
Թուրքիայի՝ ՀՀ ՄԴ որոշման առն-  
չութեամբ երրորդ կողմից գրաւոր  
երաշխիքներ ստանալու ապաստու-  
ման մասին, նշում է, որ իր ունեցած  
տեղեկութիւնների համաձայն՝ շա-  
հագրգիռ կողմերից որեւէ մէկն  
առայծմ այդ երաշխիքը չի տուել  
Անկարային:

«Մէկ այլ դիւանագետ հարցի  
առնչութեամբ ասաց հետեւեալը.  
«Ասենք՝ Անկարան ստացաւ այդ  
երաշխիքը: Իսկ մի՞թէ Հայաստանի  
մօտ ցանկութիւն չի առաջանայ  
երաշխիքներ պահանջել այն առն-  
չութեամբ, որ ղարաբաղեան հիմ-  
նախնդիրը չի շարժապտուելու հայ  
թուրքական յարաբերութիւնների  
գործընթացին»:

Սեմիհ Իդրիզն իր յօդուածը  
եզրափակում է՝ վկայակոչելով  
արեւմտեան դիւանագետների եւ  
նշում, որ շահագրգիռ կողմերն  
արձանագրային գործընթացում  
սպասում են նախ Անկարայի քայ-  
լին. «Ներկայ պահին միջազգային  
հանրութիւնը պահանջում է, որ-  
պէսզի Արձանագրութիւնները վա-  
ւերացուեն խորհրդարանների կող-  
մից եւ կեանքի կոչուեն: Մեզ հետ  
յրօցումը մի շարք դիւանագետների  
յայտարարութիւնները վկայում են  
այն մասին, որ առաջին քայլն  
ակնկալուում է Անկարայի կողմից:  
Սակայն դա չի լինի «ղարաբաղեան  
նախապայմանի» պատճառով: Այդ  
դէպքում դիւանագիտական ֆիաս-  
կոյից բացի մի՞թէ այլ բան է  
մնում»:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՈՒՂԵԲԵՐԸ**

Շարունակուած էջ 2-էն  
արդէն տարիներ շարունակ սպա-  
սում է այդ «ուր որ է»-ին: Քանի  
տարի նախկին ընդդիմութիւննե-  
րի ժամանակ է սպասել, արդէն մօտ  
մէկուկէս տարի ներկայիս ընդդի-  
մութեան ժամանակ է սպասում:  
Մինչդեռ երեւի թէ պէտք է հաս-  
կանալ, ու թերեւս հասարակու-  
թեանն էլ բացատրել, որ Ղարաբա-  
ղը «միանուած» յանձնելու խնդիր  
չէ: Դա նոյնիսկ եթէ իշխանութիւնն  
ուզի էլ, չի կարող յանձնել, քանի որ  
Ղարաբաղը ասենք Մերգեղանի ինս-  
տիտուտը կամ Հրազդանի ՊԵՇԿ 5-  
րդ բրիգադն է, որ վերցնես ու յանձնես  
ինչ որ մէկին կամ փոխանակես

գազի հետ: Ղարաբաղը աշխարհա-  
քաղաքական գօտի է, որտեղ Հա-  
յաստանի շահը ընդամենը շահերից  
մէկն է: Պէտք է հասկանալ ու  
բացատրել հասարակութեանը, որ  
խօսքը գնում է Հայաստանի շահը  
յանձնելու մասին, ինչը տեղի է  
ունենում ոչ թէ միանուած, այլ  
ժամանակի մէջ: Տեղի է ունենում  
այն բոլոր խնդիրների պատճառով,  
որոնք Հայաստանի ներսից, որպէս  
պետութիւն կամ պետութեան ուղե-  
բեռ, գնում են դէպի դուրս: Իսկ  
դրսում պարզուում է, որ մեր  
պետութեան ուղեբեռը ոչ թէ ժա-  
մանակակից աշխարհում մրցունակ  
գործիքներն են, այլ խոտան կամ  
աղբ, այն էլ ժամկէտանց:

**ԼՈՒՐԵՐ**

**ՈՒԵԼՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ԾԱՆՉՑԱԾ Է ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ**

Երէկ, ուղիղ երկու տարի անց Հայոց Յեղասպանութեան յուշարձանի պղծումէն յետոյ Ուելսում, Ուելսի առաջին նախարարը ճանչցած է Հայոց Յեղասպանութիւնը: Այս որոշումը կը պաշտպանեն Մեծ Բրիտանիայի խորհրդարանի Ուելսի պատգամաւորներու մեծամասնութիւնը: Այժմ, Մեծ Բրիտանիայի վարչապետ Գորդոն Պրաուները մեծ ճնշումներու կ'ենթարկուի, Լէյբորիստական կուսակցութեան մէջ տեղի ունեցող այս անջատումներու պատճառով: Յեղասպանութեան ճանաչումը շոկային ալիքներ կը հաղորդէ նաեւ Լոնտոնի Արտաքին գրասենեակի միջոցով, որ եղած է Թրքական մերժողական քաղաքականութեան աջակիցը: Յաւալի է, որ Հայաստանը մինչեւ օրս չէ ճանչցած Ուելսի ազգային կարգավիճակը՝ հիւպատոսարան հիմնելով կամ մէկ այլ ձեւով:

**ԱԲՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԻՆ ՄԷՋ ՂԱՐԱԲԱՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ Է ՈՐՊԵՍ ԶԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ**



Աւստրիայի պաշտպանութեան եւ սպորտի նախարարութիւնը իր պաշտօնական կայքին մէջ տեղադրած է քարտէզ մը, ուր Լեռնային Ղարաբաղի տարածքը ներկայացուած է որպէս Հայաստանին պատկանող տարածք:

Ինչպէս եւ կը սպասուէր, ատրպէյճանցիները այս փաստի առնչութեամբ, հերթական հիստերիան են բարձրացուցած: Նշենք, որ մշտապէս, նման դէպքեր կը գրանցուին ինտերնետի մէջ: Մասնաւորապէս, վերջերս Ատրպէյճանի իշխանութիւններու բազմաթիւ բողոքներէն յետոյ, Euronews-ը փոխեց իր կայքին մէջ տեղադրուած քարտէզը, ուր Ղարաբաղը ներկայացուած էր որպէս հայկական տարածք: Նոյն կայքին մէջ Ատրպէյճանը ներկայացուած էր ոչ թէ եւրոպական տարածաշրջանին մէջ, ինչպէս օրինակ Հայաստանն ու Վրաստանը, այլ՝ ասիական, որ նոյնպէս ատրպէյճանցիներու գայրոյթի առիթ դարձած էր:

**ԱՐԱԲԱԿԱՆ «ԱԼ ԶԱՅԵԱԹ» ՕՐԱԹԵՐԹԸ ԷՐՏՈՂԱՆԻՆ ԿԸ ՅԻՇԵՑՆԷ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Լոնտոնի մէջ հրատարակուող «Ալ Հայեաթ» օրաթերթը կը գրէ, թէ Թուրքիոյ քիւրտերուն դէմ կատարուող խտրականութիւնը եւ ճնշումները կ'արժեգրկեն Կազախի առնչութեամբ՝ վարչապետին՝ Ռեճէպ Թայիփ Էրտողանի արդարութեան եւ խղճի մասին հնչեցուցած կոչերը:

«Արդարութիւնն ու իրաւունքները անհնար է տարանջատել իրարմէ: Անոնք որոնք վայրի մը մէջ կը խօսին արդարութեան ու իրաւունքներու մասին, իսկ մէկ այլ պարագայի մէջ կ'անտեսեն այդ արժէքները, կը նշանակէ, որ երկակի չափանիշներ կը կիրարկեն: Գաղտնիք մը չէ, որ այսօրինակ մարտավարութեամբ կը գործէ Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ բարգաւաճում» կուսակցութիւնը», - կը գրէ «Ալ Հայեաթ» եւ կ'աւելցնէ. «Թուրքիա մերժած է միլիոնաւոր հայերու եւ ասորիներու դէմ իր գործած ցեղային զտումները, այդ ժողովուրդները իրենց բնօրրաններէն արմատախիլ ընելու փաստը: Ընդհակառակն, Թուրքիոյ մէջ կը դատապարտեն բոլոր անոնք, որոնք կը համարձակին խօսիլ այս բոլոր եղելութիւններուն մասին: Թուրքիա մերժած է ճանչնալ այդ բոլոր կոտորածները, իսկ Էրտողանի յիշատակած արդարութիւնը պէտք է ճանչնայ Թրքական պետութեան իրականացուցած Յեղասպանութիւնը», - կը գրէ «Ալ Հայեաթ»:

Օրաթերթը կը չիչեցնէ Նոպէյեան մրցանակակիր Օրհան Պամուքի դէմ՝ Թուրքիոյ մէջ սկսած արշաւը՝ հայերու եւ քիւրտերու դէմ կատարուած կոտորածներուն մասին խօսելու պատճառով. «Թրքական բանակը քսան տարուան ընթացքին սպաննած է երեսուն հազար մարդ, հազարաւոր քրտական գիւղեր դատարկուած են եւ այրած: Չորս միլիոնէ աւելի քիւրտ, իրենց բնակարանները լքելով, փախած ու հաստատուած են քաղաքներու մէջ: Քրտական շրջաններու նկատմամբ կիրարկուած է շրջափակում, որ աւելի սարսափելի եղած է, քան Կազախի նկատմամբ Իսրայէլի իրականացուցած շրջափակումը: Սակայն ո'չ էրտողանը, ո'չ ալ անոր կուսակիցները մէկ բառ անգամ չարտաբերեցին այս մասին, չչիչեցին ո'չ սպաննուած մանուկներու մասին, ո'չ ալ աղաղակող կիներու մասին», - կ'եզրափակէ «Ալ Հայեաթ»:

**ԹՈՒՐՔԻՈՅ ԻՇԽՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԱՐԳԻԼՈՒԻԼ**

«Haynews.am»: Ինչպէս կը յայտնէ «Ճիւմհիւրիյէթ» թերթը, Թուրքիոյ գլխաւոր դատախազ Աբդուրահման Եալչընքայեա կը նախապատրաստուի իշխող՝ «Արդարութիւն ու Ջարգացում» կուսակցութեան փակման հարցը կրկին բարձրացնելու:

Եալչընքայեա վերաքննիչ դատարանի պատուաւոր նախագահ Օրհան Ուզգիօրէնի թաղման արարողութիւններէն ետք խօսած է լրագրողներու հետ: Հիմնական նիւթը եղած է «Արդարութիւն եւ Ջարգացում» կուսակցութեան փակման հարցը: Լրագրողներէն մէկուն այն հարցին, թէ արդեօ՞ք կրնայ փակուիլ իշխող կուսակցութիւնը, Եալչընքայեա պատասխանած է, որ իւրաքանչիւր կուսակցութեան փակել-չփակելը սեփական գործունէութեամբ պայմանաւորուած է եւ աւելցուցած, որ իւրաքանչիւրի վերաբերեալ գործ կրնայ յարուցուիլ գաղտնի պայմաններու մէջ եւ կուսակցութիւնը կը տեղեկանայ այդ մասին:

Որոշ թրքական թերթեր յայտնած էին, որ Թուրքիոյ գլխաւոր դատախազը գաղտնի պայմաններու մէջ հանդիպած է Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Մուսթաֆա Պուսինին, սակայն ան հերքած է այդ տեղեկութիւնը:

**ԿՈՐՊԱՉԵՒ Կ'ԱՅՑԵԼԷ ԼԻԲԱՆԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ԳԼԽԱԴՈՐ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒՆ**



Ռուսիոյ նախկին նախագահ Միխայիլ Կորպաչեւ միջազգային Mena Cristal Awards-ի փառատօնի նախագահութեան հրաւերով ժամանեց Պէյրութ: Կորպաչեւ Երկուշաբթի առաւօտեան այցելեց Պապատայի պալատ, ուր հանդիպում մը ունեցաւ հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի հետ: Պապատայի պալատէն ելլելէ անմիջապէս ետք Կորպաչեւ ուղղուեցաւ Այն էլ Թինէ, ուր տեսակցութիւն մը ունեցաւ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ, որմէ ետք ան այցելեց վարչապետարան՝ Սատտ Հարիրիին:

**ԿԻՆ-ՄԱՅԱՊԱՐՏԸ ԻՐԱՔԻ ՄԷՋ ԱՌՆՈՒԱԶՆ 41 ԶՈՐԻՆԵՐՈՒ ԿՅԱՆՔԸ ԽԼԱԾ Է**

Պաղտատի ծայրամասերէն մէկուն մէջ կին-մահապարտի կողմէ պայթուցիկ սարքի գործարկման հետեւանքով առնուազն 41 շիրիթ ուխտագնաց զոհուած են: Այս մասին կը յայտնէ Ռոյթըր լրատուական գործակալութիւնը՝ յղում կատարելով Իրաքի ներքին գործերի նախարարութեան:

Աղբիւրի հաղորդումով, ահաբեկչական այս արարքով 41 անձ զոհուած են, եւս 106-ը՝ վիրաւորուած: Յարձակումը կատարուած է վրանի վրայ, ուր ուխտագնացներուն սնունդ եւ ջուր կը բաժնուէր:

Շիա ուխտագնացներ հաւաքուած էին Պաղտատի մէջ, «Արբային» կրօնական տօնի առիթով Քարբալա սուրբ քաղաք ուղեւորուելու նպատակով:

**ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԱՅԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ ԿՐՆԱՅ ՄԱՅԱՊԱՏԻԺԻ ԵՆԹԱՐԿՈՒԻԼ**

ԱՄՆ-ը պատրաստ է մահապատիժի ենթարկել 2001 թուականի Սեպտեմբեր 11-ի ահաբեկչութեան կազմակերպիչին: Սպիտակ Տան մամլոյ խօսնակ Ռոբերտ Կիբըր CNN հեռուստաընկերութեան հաղորդման ընթացքին յայտնած է, որ 2001 թուականի Սեպտեմբեր 11-ին ահաբեկչութեան կազմակերպման մէջ կասկածուող Խալիդ Շէյխ Մուհամետը կրնայ մահապատիժի ենթարկուիլ, եթէ անոր յանցաւոր ըլլալը ապացուցուի:

Կիբըր ըսած է, որ կասկածեալը խոստովանած է իր մասնակցութիւնը ահաբեկչութեան կազմակերպմանը:

«Խալիդ Շէյխ Մուհամետը կ'ուղեւորուի դատարան, իսկ դատարանէն յետոյ՝ բարձրեալի մօտ: Ամենայն հաւանականութեամբ, ան մահապատիժի կ'ենթարկուի՝ իրագործած հրէշային արարքի՝ Յազար ամերիկացիներու սպանութեան կազմակերպման համար» - ըսած է Կիբըր:

**ԱԶԳԱՅԻՆ**

**ՍՏԱՄՊՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՆՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԿԱՆԳՆԵԼ ՎԵՐԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԱՋ**

Հայ-թրքական յարաբերութիւններու զարգացման համատեքստում, ըստ թրքագէտ Ռուբէն Մելքոնեանի, մի խնդիր կայ, որ անտեսուած է՝ Դաթուրքիայի հայ համայնքն է. խօսելով «Ռուբաթ» մամուլի ակումբում նա ասել է:

«Թուրքիայում բնակուող հայութեան մանրամասն ուսումնասիրութիւնը կարող է կարեւոր դեր խաղալ յետագայում հայ-թրքական յարաբերութիւնների հաստատումից յետոյ եւս:

Թուրքիայի առաքելական հայ համայնքը, որ հիմնականում Ստամպուլում է, կանգնած է մի շարք լուրջ խնդիրների առաջ, որոնցից է կրթութեան եւ դպրոցների խնդիրը:

«Այսօր Ստամպուլի հայ համայնքն ունի 17 դպրոց նախկին 32-ի փոխարէն: Ընդամէնը մէկ ամիս առաջ կրկին փակուեց եւս մէկ հայկական դպրոց այն պատճառով, որ չունեն բաւարար թուով աշակերտներ:

Ռուբէն Մելքոնեանի հաղորդմամբ, աշակերտների նուազման գործընթացը շարունակական բնոյթ ունի, եւ իւրաքանչիւր տարի հայկական դպրոցները կորցնում են 150-200 աշակերտ:

«Եթէ այսպէս շարունակուի, ապա յառաջիկայ տարիներին կանխատեսելի է, որ կը փակուեն եւս մի քանի դպրոցներ, - ասել է թրքագէտը:

Թուրքիայի հայ համայնքին Ռ. Մելքոնեանը պայմանականօրէն բաժանեց երեք խմբի: Մի խումբը, ըստ նրա, անտարբեր է ազգային խնդիրների նկատմամբ եւ նրանց անդամակցութիւնը համայնքին կրում է սիմբոլիկ բնոյթ, երկրորդ խումբը համակերպուող խումբն է, որ կազմում է մեծամասնութիւն եւ տասնամեակներ տեւած թրքական հալածական քաղաքականութեան հետեւանքով զգուշաւոր են եւ, երբեմն, նաեւ վախեցած:

Երրորդ խումբը, ըստ թրքագէտի, ակտիւ խումբն է՝ բաղկացած ազատական գաղափարներով համակուած երիտասարդներով, որոնք ձգտում են որոշակի փոփոխութիւնների. նրանք կազմում են փոքր թիւ եւ որեւէ վճռորոշ ձայն չունեն:

Ռ. Մելքոնեանը գտնում է որ Ստամպուլահայ համայնքի բազմաթիւ խնդիրների թոււմ ամենակարեւորներից մէկը պատրիարքի ընտրութեան հարցն է, եւ քանի դեռ այդ հարցը լուծուած չէ, համայնքը կարծես գլխատուած վիճակում լինի:

No; only in the Turkish press a bit. I believe these offers were dangled out there as carrots to seal the deal in terms of closing the lid on the Genocide issue, closing the territorial issue, etc. For all we know, these still could be secret agreements we're not aware of. After ratification of the Protocols and no one talks about this, the next step is a treaty between the Republics of Armenia and Turkey, encompassing much more concrete details.

But at the same time, just the fact that these offers were on the table, maybe to the credit of Turkish negotiating strategy; maybe it all was insincere and just a way to bring the Armenian side in. Who's to say? I wasn't in the room.

What's your assessment of the activities of the RoA Ministry of Foreign Affairs? What's their conception of regional politics and of Armenia's place on the world stage?

To be honest, we see more missed opportunities than concrete results. In fact, we see competent Armenian ambassadors to be the exception, not the rule. Whether it's the competent ones like Tatul Margarian in Washington and some others; they're the exception.

But the interesting thing about the Protocols, it revealed not only the strategic depth of the Armenian Foreign Ministry but there is an interesting problem between Armenia and Turkey. It is the same problem. The Armenian FM has been playing a secondary role. All of this is from President Sargsyan's office. In Turkey, it's the same. It all comes from the Turkish President office and that of the Prime Minister; not from the foreign ministry.

In fact, the Turkish Foreign Ministry is still not convinced that this is a wise move, mainly because their demands regarding ASALA and the killings of Turkish diplomats is nowhere on the table. And they have been obstructing the process in a turf war with Gul and Erdogan. That's why Davutoglu was appointed over Babacan; to bring them on board. On the Armenian side, it's the same thing, where it's not Nalbandian, the foreign minister, who's negotiating for Armenia. It's been Arman Kirakossian, the Deputy Foreign Minister. This is also interesting because it reflects the general tendency of this Armenian government that all crucial decisions are made by the president and no one else.

*Getting back to President Sargsyan's trip to the diaspora, was he surprised by the reaction he received? He was called a 'traitor' by some. There were times when the man looked visibly shaken. Was he?*

Yes, he was shaken. He didn't expect demonstrations and such a vocal, in your face, opposition. Mainly because the people around the president, just like the Byzantine or Soviet system, are people who generally want to tell him what he wants to hear and don't tell him the bad news, if there is any to tell. I think he was

in the dark.

But I think the interesting thing is that if he went to the diaspora not expecting such a reaction and being visibly shaken, when he came back though, in a general sense, they were surprised that the reaction was less than they expected; mainly for two reasons.

It was less than expected in Armenia itself. The opposition didn't unite around the issue; the ARF, Levon Ter-Petrosyan, etc. They couldn't come together on the issue and that was reassuring for the government. Secondly, as vocal and vehement as the opposition was, it didn't translate into any politically. So, this is also reassuring for the government.

Interestingly enough, Turkey had expected a much stronger reaction, in a negative sense, that didn't materialize. In a word, both sides expected more. Turkey expected more because it has a paranoia regarding the Armenian diaspora. It thinks the diaspora is a powerful elephant in Washington lobbying circles.

Let's focus on the ARF as the most visible opposition to the Protocols. The party has come up with something called a "Roadmap to Regime Change" for Armenia. What do you make of such talk given the track-record of the ARF in RoA politics?

Let me be honest with you. While I agree with the ARF on many of the discrepancies, shortcomings and dangers from this whole process, my criticism of the ARF is why they waited for so long before leaving the coalition government. In other words, they have become too invested in the stability of the Kocharyan term, etc, and it tended to co-opt the ARF. And to be honest, whether it's the authoritarian nature, the arrogance of power, the corruption, the lack of democracy... March 1, 2008, was the final test when the ARF should have pulled out of the coalition. All this talk by the ARF is too little, too late, in my opinion.

The interesting division, though, is between the ARF outside Armenia and the party here in Armenia. Many of the leaders of the ARF now in Armenia are too close to government circles and share certain vested interest with the regime. I think the ordinary rank and file party members in the diaspora are not only unaware of the relationships between party leaders here and the government, and if they did, I think they would be very upset.

As I said; it's too little, too late. I encourage it, it's the right move, but it's just not enough.

But again, why should the ordinary diasporan wait for a press release from a specific organization to act? They should stand up now. And the next time in the summer that they come here instead of smiling at a photo-op with this or that official, they should put these people on the carpet and raise these issues.

*What are the real possibilities for positive change in Armenia? Is the opposition, such as it is, capable of*

Continued on page 4

Continued on page 4

## Armenian Bar Association Annual Scholarship Program

LOS ANGELES -- The Armenian Bar Association is pleased to announce that it is accepting applications for its Fifth Annual Scholarship Program. The Program is designed to support meritorious students of Armenian descent attending, or accepted for admission to, an approved law school in the United States, Armenia or elsewhere. Recipients must demonstrate an outstanding academic record as well as a strong commitment to the Armenian community, particularly in humanitarian and/or law-related endeavors. The Scholarship Program is primarily funded by donations and by fundraising events hosted by the Armenian Bar Association. In addition to the Scholarship Program, the Armenian Bar Association supports Armenian law students through its varied programs and events including the mentorship and internship programs and presentations by legal scholars.

"Last year, we awarded three scholarships under the Scholarship Program, and we are very glad that we can continue to support Armenian students studying law. The Armenian Bar Association is committed to helping students who have shown superior academic achievement and who contribute to the Armenian communities in which they live," said Christine Engustian, co-chair of the Armenian Bar Association's Grants Committee. Amy Hoogasian, co-chair and Nana Chibukhchian are also on the Grants Committee.

Students interested in applying for an Armenian Bar Association scholarship should obtain an application at the Armenian Bar Association's website ([www.armenianbar.org](http://www.armenianbar.org)).

The application deadline is March 31, 2010. The application must either be postmarked by March 31, 2010 or if e-mailed, it should be received no later than midnight (PST) of March 31, 2010.

The Armenian Bar Association is the largest organization of Armenian lawyers in the world.

## Turkish Prime Minister Blasts Karabakh Mediators

Continued from page 1

cated that the Turkish parliament, in which his Justice and Development Party has a clear majority, will not ratify the Turkish-Armenian normalization agreements signed in October unless the Minsk Group efforts yield a breakthrough.

According to "Today's Zaman," Erdogan also reiterated his government's claims that a recent ruling by Armenia's Constitutional Court runs counter to the Turkish-Armenian protocols. Ankara is particularly unhappy with the court's conclusion that the deal can not stop Armenia seeking broader international recognition of the Armenian genocide.

Turkish-Armenian relations were reportedly on the agenda of a Sunday phone conversation between Presidents Abdullah Gul of Turkey and Dmitry

Medvedev of Russia. Citing Turkish diplomatic sources, "Hurriyet Daily News" reported that Gul raised Ankara's concerns about the Armenian court ruling with Medvedev and urged Moscow to press Yerevan to address them.

"We need a clarification as to whether the court ruling will shadow or restrict the protocols," the paper quoted Gul as saying. It said he also called on Russia to step up the search for Karabakh peace.

Erdogan similarly tried to get the Russians to seek greater Armenian concessions to Azerbaijan for the sake of the Turkish-Armenian normalization when he visited Moscow last month. However, Russian Prime Minister Vladimir Putin publicly told him to drop the linkage between what Moscow considers two separate processes.

## Letter to the Editor

Continued from page 3

government making unnecessary concessions with which the people of Armenia do not agree. No one at that meeting will say, this is not the government the Armenian people chose, this is not what the people of Armenia want. No one at that meeting will speak with the interests of Armenia in mind. And consequently, no one will question the fundamentals of the U.S. strategy.

And that is exactly what the U.S. government, PACE, and other foreign powers want to hear. The silence regarding the ruling regime will condone it. The fundamental problem will be ignored. The game will be played, and all of the players will leave feeling they read their lines well. And Clinton will report saying she now understands better the concerns of the Armenian Diaspora. And the U.S. and other foreign powers will continue to

push forward, based on poor information and false assumptions.

Civil engineers building a bridge must take into account not only how to build a bridge that will stand, but how to build it so it will last, so it can be maintained, updated and repaired. The job is not compromised with poor materials, plans, or construction, nor is it rushed or allowed to be built on eroded river banks. Yet, relations between two nations with hundreds of years of complex history are being wheeled and dealed. The U.S. and other foreign powers are building a bridge for their own interests, but how long it will stand, if it stands at all, is yet to be seen. And if and when it begins to crumble, the investments of those who built it will begin to fall as well, and they will scratch their heads and wonder why.

Vahe DerMardirosoian  
Los Angeles

## Analyst Richard Giragosian

Continued from page 1

*formulating such change? Are the people looking for new faces, new approaches, to the entrenched and systematic problems that exist?*

Let me point something out to start. When we talk about Armenia being so small, in terms of population and territory, from an American perspective, it's usually conveyed as a negative. And it is a negative. But we always forget that there's a positive side as well. Being so small means it's much easier to implement real lasting change if and when there's the political will or the political opportunity. Once we embark on true democratic and economic reform in Armenia, then it won't be long until the country really takes off. Because it's so small the country is conducive to real progress. The impact from real change will be doubled or tripled.

Sadly, despite the end of apathy, there's still an entrenched cynicism. No political party or figure is playing the socio-economic card of injustice. There's no real populism. There's no real grassroots political activity. People are used to this and are cynical and frustrated. But, if and when a true leader tries to emerge, or a true democrat tries to maximize this, then I think, people are waiting for such an opportunity.

The real hope I have is that the system can no longer sustain itself. We have a political stalemate and if that was all, the system could maintain its power. But it's the economic crisis on top of a political stalemate that will tip the scales. It will be forced to change from the pressure from within. But we don't know what direction Armenia will go. It may go more authoritarian with a new elite that's even worse, or, finally, we may have a new elite that has not derived from the Nagorno-Karabakh War and may take the country in the right direction.

The real problem is not the opposition, nor even the government; it's the system. Until the system is forced to open up, the opposition will only be marginalized, cannot be truly effective and the authorities won't listen or care. But at the same time, I don't think the authorities will be able to maintain their hold over the closed system and cracks are already appearing, like we see between the Republican Party (Hanrapatakan) and Prosperous Armenia (Bargavatch). For the first time in recent Armenian history we see infighting within the government itself. This confirms to me that the crisis is serious and the system is in danger of imploding.

It's not only a clash over dwindling resources. It's about Armenian politics and politics here revolves around presidents – the first, the former and the current. That's what this is about, and in many ways the bigger threat to Sargsyan isn't Ter-Petrosyan, but Kocharyan.

These divisions even surfaced during the events of March 1, 2008. Most

interestingly, if we look at the instruments of power that the government has, that any state has, they no longer have a monopoly on that power. In other words, there were divisions within the police, security service, that revealed and reflected divisions within society and that scared the former president much more than the people camped out in Opera Square. Now there's mistrust and a lack of reliance, even on the instruments of power. And I think that's a good thing for democracy and the ordinary Armenian citizen.

*On a personal note, you have been living and working in Armenia for three years. What positives and negatives, in terms of progress and development have you observed; especially in the public sector?*

To me the most obvious positive development is ironically a result of the worst experience I have observed – March 1st – because, in my opinion, March 1, 2008, changed Armenia in two ways. The Armenian people changed because of March 1st. They are no longer as apathetic, no longer content with complete political disengagement; they are reaching a tipping point. And there is no possibility of returning to the pre-March 1st status quo, in my opinion.

The second interesting development coming out of March 1st is that, if the Armenian people have changed, the Armenian government has changed demonstrably. It enjoys much less legitimacy and is more unpopular than any preceding Armenian government. It is much weaker as a result. And I believe that this combination is a good development for instituting real change in Armenia, in a positive way.

In terms of civil society, we have a dynamic civic society. We also have in general a lack of momentum, if you will. We see the same faces, the same people, who are faced with brick wall imposed against civic society activity by the state, by various official and oligarchs, who are getting tired of smashing their head against a brick wall.

The negative development in civil society is that we see a new Russian style, pro-government, NGO camp emerging; cheerleaders for the government within civil society.

At the same time, I also retain a sense of hope and optimism in the next generation, which has now come of age, not within the Soviet system, but within the independent Armenian system. They are much less likely to be bought off or co-opted and are much more frustrated by the status-quo and much more pissed-off at the lack of opportunity.

You know, most of those who left Armenia were the ones who could. Many who are here now, in the younger generation, have decided to stick it out and have not yet given up. And I really think that the future of the country rests in the hands of that generation, not mine and not the older one. This is the optimism that keeps me going.

(End)

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

# ՍԱՐԳԻՍ ՏԻՐՈՒՆԻ ՆԱՐԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒԲԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Նախորդ տարիներուն նման այս տարի եւս Ս.Գ.Հ.Կ. «Տիրունի» Ուսանողական Երիտասարդական Միութիւնը ոգեկոչեց անմահ Սարգիս Տիրունիի նահատակութեան տարելիցը: Շաբաթ, 16 Յունուար 2010-ի երեկոյեան Հաճնոյ Ս. Գէորգ եկեղեցւոյ շրջափակին մէջ գաղափարական ընկեր-ընկերուհիներուն ներկայութեամբ տեղի ունեցաւ մոմավառութեան արարողութիւն մը: Այդ միջոցին գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Երեկոյին բացումը կատարեց ընկեր Արմէն Մաճառեան, որ ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք փոխանցեց վարչութեան խօսքը: Ան ըսաւ. «Վստահ ենք, որ այսօր հոս գտնուողներս գիտակից ենք մեր հոս գտնուելու պատճառներուն: Բոլորս գիտակից ենք, որ մեր հոս գտնուելով՝ անմառ պիտի պահենք մեր մեծ ուսուցիչ՝ նահատակ Ս. Տիրունիի գաղափարախօսութիւնը եւ անոր սկզբունքայնութիւնը: Գիտակից ենք, որ մեր հոս գտնուելով՝ պիտի ամրապնդենք Հնչակեան կուսակցութեան ուղեգիծը եւ անոր ծրագիրներուն իրագործումը: Գիտակից ենք, որ պիտի կարենանք պատրաստել եւ սնուցել Տիրունիի շունչով խիզախ ու գիտակից երիտասարդութիւն եւ վերջապէս գիտակից ենք, որ մեր հոս գտնուելով՝ պիտի կարենանք պաշտպանել հայ ժողովուրդին իրաւունքները եւ դէմ կանգնինք հայ-թրքական ստորագրուած արձանագրութիւններուն, որ դժբախտաբար վաւերացուեցաւ Ազգային Սահմանադրական դատարանին կողմէ, սակայն անվաւեր մնաց եւ պիտի մնայ հայ ժողովուրդի մեծամասնութեան կողմէ»:

Ան աւելցուց. «81 տարիներ կը բաժնեն մեզ այդ տխուր թուականէն, 81 տարիներ անց եւ Ս. Տիրունիին սպաննող ոճրագործ ձեռքերը կը մնան անյայտ, 81 տարիներ եւ անոնք կը մնան անպատիժ, 81 տարիներ եւ դժբախտաբար կը շարունակուին հայաստանի գնդակներ արձակուիլ հոս ու հոն: Սակայն միեւնոյն ժամանակ 81 տարիներ հնչակեան նոր ծիրեր կը ծնին, 81 տարիներ հնչակեան նոր սերմեր կը անանին Տիրունիի շունչով ու անոր գաղափարախօսութեամբ եւ վերջապէս 81 տարիներ անցած են, սակայն կը շարունակէ Տիրունիի գաղափարախօսութիւնը, եւ հոս ներկաներս կ'ապացուցենք զայն»: Ներկաները ըմբոշինեցին պիւլուքահայ ծանօթ մտաւորական հրապարակագիր եւ գրող Անդրանիկ Ծառուկեանի արտասանած վկայութիւնը ողբացեալ Սարգիս Տիրունիի չիւշատակին:

Փոքրիկն Յակոբ Քէօշկերեան ասմունքեց Սարգիս Տիրունիի նուիրուած քերթուած մը: Ներկաները ծանօթացան Սարգիս Տիրունիի կենսագրականին: Ապա պատանի Յարութ Ամիրեան արտասանեց «Ի Տես Սարգիս Տիրունիի Յուշարձանին» քերթուածը: Օրուան խորհուրդը պատգամեց Վարէն Մարմնի անդամ ընկեր Ալեքսան Քէօշկերեան: Ան ըսաւ, որ նահատակներուն չիւշատակը մեզ կ'ոգեւորէ, որպէսզի աւելի մեծ նուիրումով եւ լարումով մղուինք մեր կուսակցակաջն աշխատանքին: Ան հաստատեց, որ Սարգիս Տիրունիին այսօր ներկայ է մեր մէջ, վկայ՝ այսօրուան հնչակեան երիտասարդութիւնը:

Յարգելի ընկերը նաեւ ըսաւ,

թէ Տիրունին ոչ միայն Հնչակեան կուսակցութեան նահատակն էր, այլեւ գաղութատիրութեան դէմ պայքարող բոլոր ժողովուրդներու խորհրդանիշը: Իր խօսքի աւարտին ընկերը յաջողութիւն մաղթեց Ս.Գ.Հ.Կ. «Տիրունի» Ուսանողական Երիտասարդական միաւորի ընկեր-ընկերուհիներուն:

Ներկաները հաւաքաբար եր-



գեցին «Պարծանք Քեզի» երգը, որմէ ետք սկսաւ Սարգիս Տիրունիի եւ հնչակեան բոլոր հերոսներու յիշատակին մոմավառութեան արարողութիւնը:

Յաջորդ օրը՝ Կիրակի 17 Յունուար 2010-ի առաւօտեան, հակա-



ռակ ցուրտ կլիմային, մեծ թիւով ընկեր-ընկերուհիներ ներկայ գտնուեցան Ռոմէյլ թաղի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ հնչակեան բոլոր հերոսներուն հոգեհանգստեան պաշտօնին:

Եկեղեցիին մէջ պատարագեց եւ օրուան պատգամը փոխանցեց Տէր Օշական քահանայ Աշրգեան: Հոգեհանգստեան պաշտօնէն անմիջապէս ետք ներկաները ուղղուեցան դէպի Փրն Շրպէի ազգային գերեզմանատունը, ուր, ինչպէս անցնող տարիներուն, այս տարի եւս տեղի ունեցաւ ի չիւշատակ Սարգիս Տիրունիի հաւատքի եւ ուխտի վերանորոգման կոկիկ հաւաք մը: Հ.Մ.Մ.-ի փողերախումբը Լիբանանի, Հայաստանի եւ կուսակցութեան քայլերգներով յատուկ հմայք մը տուաւ հանգիստութեան:

«Տիրունի» Ուսանողական Երիտասարդական Միութեան վարչութեան անունով խօսք առաւ ընկ.Տի Հայկօ Խանճիհանեան: Ան ըսաւ. «Իր գաղափարախօսութեան մէջ

Սարգիս Տիրունիին սորվեցուց ըլլալ մարդասէր, հայրենասէր եւ գաղափարապաշտ: Ասոնք են յարատեւութեան սկզբունքները, որոնց հաւատացած ենք եւ ուխտած՝ քայլել այս ուղիով: Որովհետեւ Սարգիս Տիրունիին գաղափարապաշտ հնչակեան էր, ուրեմն ան ընկերվարական եւ մարդասէր էր: Սարգիս Տիրունին չղրաւ խտրականութիւն ազգե-

րու եւ դաւանանքներու միջեւ, ան պայքարեցաւ ֆրանսական գաղութատիրութեան դէմ՝ ըլլալով արաբ ժողովուրդի կողքին, եղաւ մարդասիրութեան տիպար, հաւասարութեան ջատագով եւ արդարութեան ջերմ պաշտպան: Սարգիս Տիրունիի

իշխանութիւն, վարչակարգ եւ նախագահ ըլլալին հոն ղեկավարողները, ան կը հաւատար, որ այս բոլորը կը փոխուին, սակայն հայրենիքն ու հողը երբեք:

Տիրունիի համար հայրենիքը միշտ ալ եղած էր գերադաս ամէն դրոյթէ ու հաշիւէ:

Սարգիս Տիրունի՝ իբրեւ գաղափարապաշտ, կը հաւատար որ գաղափարական շահը բարձր է ամէն եսակեղրոն հաշիւներէ, ան մեզի սորվեցուց անձը զոհել գաղափարին, հաւաքականութեան եւ Հնչակեան կուսակցութեան համար: Ան սորվեցուց գաղափարական կեանքին մէջ ըլլալ յանդուգն ու վրձնակամ. եթէ իրաւացի ես, պայքարէ՛ անոնց դէմ, որոնք կուսակցութիւնը կը վերածեն ազարակի՝ աթոռ պահպանելու եւ վարկ շահելու համար»:

Ապա «Տիրունի» Ուսանողական Երիտասարդական Ուսանողական Միութեան Ուսանողական դիւանէն ընկ.Տի Թալին Թեփիրճեան ամփոփ կերպով ներկայացուց Տիրունիի կենսագրական գիծերը:

Յանուն Ս.Գ.Հ.Կ. Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնի՝ օրուան խօսքը փոխանցեց ընկեր Յակոբ Կէրկէրեան: Յարգելի ընկերը, մեր ժողովուրդի ազգային ազատագրական պայքարի մէջէն դրուագներ վկայակոչելով, արժեւորեց Սարգիս Տիրունիի խիզախաշունչ, աննկուն հայրենասէրի եւ զոհողութեան բարձր ոգին: Ան նշեց, որ Սարգիս Տիրունի ամենավառ խորհրդանիշն է յետ եղեռնեան առօրեային մէջ սիւլուքի ոչ նախանձելի վիճակին: Ընկերը ըսաւ, որ անոր հայրենասիրութեան եւ գաղափարական դաստիարակութեան շունչը հետագայ սերունդներու համար դարձաւ աշխատանքի, անկորում պայքարի եւ կամքի արտայայտութեան դրսեւորում:

Ներկաները, կուսակցական եւ գաղափարական աւիւնով վերընձիւղած եւ ազգային հայրենասիրական առաքելութիւնը շարունակելու ուխտը վերահաստատելով, բաժնուեցան անմահ Տիրունիի դամբարանէն:

Գնահատելի էր, երէցներու կողքին, մոմավառութեան եւ գերեզմանատան մէջ տեղի ունեցող ուխտագնացութեան իրենց մասնակցութիւնը բերող «Հայկ Բժշկեան» պատանեկան միութեան մասնակցութիւնը, որոնք իրենց երէց ընկեր-ընկերուհիներու նման հայրենիքի եւ կուսակցութեան դրօշներով վերանորոգեցին իրենց ուխտը՝ ըլլալու տիպար հայեր եւ հնչակեաններ՝ ծառայելու հայ ժողովուրդին եւ հայրենիքին:

ՏԻՐՈՒՆԻԱԿԱՆ

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

## Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱԷՓԵԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

### ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ, ՕԾՈՒՄ, ԳԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆ, ՅՈՒԲԵԼԵԱՆ

**ԴՈԿՏ. Տ. ԶԱԽԷՆ ԱԻ. ՔԶՆՑ.**  
**ԱՐՋՈՒՄԱՆԵԱՆ**

Պետրոս Ա Սարաճեան Կիլիկիոյ Կաթողիկոսի 1940 թուականի անակնկալ վախճանումէն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութիւնը տեղի ունեցաւ Անթիլիասի Մայր Տաճարին մէջ 1943 թուի Մայիսի 10-ին, ընտրութեամբը 75-ամեայ Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեանի, Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւելեան Թեմի Առաջնորդին: Ընտրեալ Հայրապետը 20-րդ դարու ամենէն զարգացած, յարգուած ձեռագրագէտ եւ արուեստագիտական հոգեւորականներէն էր որ էջմիածնի Գէորգեան ձեռնարանը աւարտելէն ետք իր համալսարանական ուսումը կատարելագործած էր Գերմանիոյ Պերլինի, Լաիցիի եւ Հալլէի մէջ՝ Մկրտիչ Ա Նրիմեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի արտօնութեամբ:

#### Դէպի Կիլիկեան Աթոռ

1935 թուականէն ի վեր Գարեգին Արքեպիսկոպոս հեռացած էր Հայաստանէն պահելով միշտ իր անդամակցութիւնը Մայր Աթոռի միաբանութեան շարքերէն ներս, ստանձնած ըլլալով Խորէն Ա Մուրաբէգեան Ամենայն Հայոց կաթողիկոսի լիազօր պատուիրակի պաշտօնը: Ընտրեալ Կաթողիկոսի Անթիլիաս ժամանումը ուշացաւ երկու տարիով՝ «ի հետեւան ալլ եւ ալլ պատճառանաց զորս ոչ կարեմք մի առ մի թուել աստի», ինչպէս ինք կ'ըսէր իր անդրանիկ կոնդակին մէջ: 1945 Յունուար 21-ին Գարեգին Արքեպիսկոպոս, ընկերակցութեամբ Կիլիկեան Աթոռի դպրեվանքի անդրանիկ սան Դերենիկ վարդապետ Փոլատեանի, ծովու ճամբով Նիւ Եորքէն երկար եւ փոթորկալից ճամբորդութենէ ետք, համաշխարհային երկրորդ պատերազմի արհաւիրքի վտանգալից տարիներուն կը հասնէր Փորթ Սայիտ, Եգիպտոս, ապա Գահիրէ ուր ամպ հովանիի տակ «Հրաշափառ»ով մուտք կը գործէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ մայր եկեղեցիէն ներս:

Երուսաղէմի վրայով, ուր հայրապետական շուքով ընդունուեցաւ Կիլիկիոյ Բ Իսրայէլեան Հայոց Պատրիարքի եւ միաբանութեան կողմէ, Գարեգին Արքեպիսկոպոս 1945 Մարտ 23-ին կը հասնէր Անթիլիաս: Երուսաղէմէն իրեն կ'ընկերակցէին Կիլիկեան Աթոռի միաբաններէն Եփրեմ Արքեպո. Տոնմունի, Ջարեհ Մ. Վրդ. Փայասլեան եւ Դերենիկ Վրդ. Փոլատեան: Անթիլիասի մէջ Հայրապետը կը դիմաւորուէր կաթողիկոսական Տեղապահ Խաղ Արքեպո. Աջապահեանի կողմէ, եւ «Հրաշափառ»ով մուտք կը գործէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճար, ուր Տեղապահ Սրբազանը իր բարի գալուստի խօսքին մէջ կը հրաւիրէր ընտրեալ Հայրապետը «թագաւորելու ո'չ աւերակաց վրայ եւ ո'չ ալ ջախջախուած Աթոռի վրայ, ալլ աստանդական թափառումէ ետք ինքզինք վերագտած եւ վերակերտած Անթիլիասի ծովափին վրայ՝ յաջորդելով Սահակ, Բաբգէն եւ Պետրոս մեծագործ հայրապետներուն»:

#### Ձեռնադրութիւնն ու Օծումը

Գարեգին Հայրապետի կաթողիկոսական ձեռնադրութիւնն ու

օծումը տեղի ունեցան հանդիսաւոր իրադրութեան մէջ 1945 թուի Ապրիլի 8-ին: Շաբաթ երեկոյ, ի ներկայութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ վեց եպիսկոպոսներու, Ընտրեալ Հայրապետը կատարեց իր հայրապետական ուխտը մայր տաճարին մէջ, խոստանալով «յանձն առնել զպաշտօնս զայս եպիսկոպոսապետութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ, եւ բոլորապաշտող նուիրմամբ ընծայել զանձն իմ յանվթար կատարումն Աստուածադիր օրինաց եւ կաթողիկոսական պարտուց»:

Կիրակի առաւօտ հանդիսա-



ւոր թափօրը կազմուեցաւ Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք Զաւէն Արքեպիսկոպոս Տէր Եղիայեանի հանդիսապետութեամբ, եւ մասնակցութեամբ Կիլիկեան Աթոռի Տեղապահ Խաղ Աջապահեան արքեպիսկոպոսի, Լիբանանի կաթողիկոսական փոխանորդ Արտաւազդ Միւրմէեան արքեպիսկոպոսի, Իրաքի նախկին առաջնորդ Ռուբէն Մանասեան արքեպիսկոպոսի, Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ Տոնմունի արքեպիսկոպոսի, եւ Եգիպտոսի հայոց առաջնորդ Մամբրէ Սիւրունեան եպիսկոպոսի:

Հայ եպիսկոպոսներու ընտրեալ այս փաղանգը նախախնամական ներքին աղերս մը ունէր հանդիսութեանց հետ, պատմական եւ ճակատագրական աղերս մը, երբ նկատի առնենք իւրաքանչիւրին անցեալը: Հոն էր էջմիածնի Գէորգեան ձեռնարանի հարազատ գաւակ, Սարգարապատ մարտի հերոս եւ մեծ հայրենասէր Գարեգին Հայրապետ ինք եւ իրեն միաբանակից Ռուբէն Արք. Մանասեան: Հոն էին Արմաշի երկու անդրանիկ եւ ամենէն կրտսեր սաները՝ Զաւէն Պատրիարք եւ Մամբրէ եպիսկոպոս, ինչպէս նաեւ Սիսի հնադարեան Աթոռէն երկու հաւատարիմ միաբաններ՝ Աջապահեան եւ Տոնմունի արքեպիսկոպոսներ, որոնք պատմական ուղիղ կամուրջը կը կազմէին Սիսի եւ Անթիլիասի միջեւ: Իսկ Արտաւազդ Միւրմէեան, ձեռնադրուած արմաշական եպիսկոպոս Գնէլ Գալեմբեարեանէ, Կիլիկիոյ կարեւորագոյն Բերիոյ թեմը ծաղկեցնող Առաջնորդն էր յետ եղեռնեան տարիներուն:

Եպիսկոպոսներու չափազանց նուազ թիւը թէ՛ Մայր Աթոռէն ներս, ուր միայն Տեղակալը կար այդ տարին առանց մէկ հատ եպիսկոպոսի իր կողքին, եւ թէ՛ արտասահմանի մէջ, ուր մնացեալ ընտրանին միայնակ կը պահպանէր հայ քրիստոնէութեան աւանդը այնքան

հաւատարմօրէն, կրցած էր Անթիլիաս բերել որակով բարձր եւ ներկայացուցչութեամբ նախախնամական յիշեալ վեց արքեպիսկոպոսները պատիւը ընելու արժանաւորագոյնին՝ ՅՈՎԱԷՓԵԱՆՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, իր ծերացեալ եւ ալլապէս կորովի տարիքին:

Գարեգին Հայրապետ ինք մատուց Ս. Պատարագը, եւ կանոնական պահուած ծովակի գալով ստացաւ հայրապետական ձեռնադրութիւն գինք շրջապատող վեց եպիսկոպոսներէն: Իսկ «Ողջոյն» ի պահուն նորընտիր Հայրապետը կրկին

սկսաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներս: Հոն հասած էր անսովոր տաղանդով, պատրաստութեամբ, խանդով եւ անհամեմատ հայրենասիրութեամբ լեցուն հոգեւորական մը, որ Աթոռն ու Դպրեվանքը պիտի վերածէր իսկական հոգեւոր, կրթական եւ մշակութային «շիրալայ»ի մը, ինչպէս ինք կը սիրէր որակել: Արտասահմանի ուշադրութիւնը պիտի դառնար ու կեդրոնանար Անթիլիասի վրայ, վասնզի հոն էր եկած շնորհալի, բազմերախտ եւ գիտուն հեղինակութիւն մը, որուն ներկայութիւնը միաբանութեան եւ Դպրեվանքի աշակերտութեան համար երկնառաք պարգեւ մըն էր, ու հայ ժողովուրդին համար ալ անկրկնելի յարացոյց մը: Եթէ Արմաշական մեծոգի առաջնորդները՝ Բաբգէն Աթոռակից Կաթողիկոս, Շահէ Արքեպիսկոպոս Գասպարեան եւ Փառէն Եպիսկոպոս Մելքոնեան Անթիլիասը կերտեցին Սահակ Հայրապետի եւ Պետրոս Հայրապետի հովուապետութեան տարիներուն, էջմիածնի գաւակ Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանց եղաւ ստեղծագործող ուժը նոյն այդ Աթոռին:

#### Անդրանիկ Կոնգրակը

Գարեգին Ա Կաթողիկոս գրաբար լեզուով իսկոյն գրեց իր անդրանիկ կոնգրակը՝ «յառաջին ամի աթոռակալութեան Մերում»:  
Յիշատակելէ ետք իր ճամբորդութիւնն ու Երուսաղէմի պատմական այցելութիւնը, իր կաթողիկոսական օծման կ'անդրադառնար աղաչելով հաւատացեալ ժողովուրդին «աղօթել առ Աստուած օգնական լինել նուաստութեանս առ ի կատարել զուսուրբութեանս Մեր ծառայութիւն ի տանն Տեառն յայսմ դժուարին պաշտամանս»: Իր խօսքը ուղղելով Կիլիկեան վտարանդի ժողովուրդին, լսեցէք կ'ըսէր, որդեակք իմ, որ համաշխարհային առաջին պատերազմի հետեւանքով «վիրաւորեցաւ ազգ մեր համայն, հողմացրիւ եղեւ եւ Տունն Կիլիկիոյ», որուն վէրքերը շինարար գործքով բուժելու համար Հայրապետը յորդոր կը կարդար բոլորին «առ ի պահպանութիւն եւ ի զարգացումն հոգեւոր բարեաց»: Հոգեւոր բարեք ըսելով գիտնական Գարեգին Կաթողիկոսի մտքին մէջ կը ցոլանար Հայ Եկեղեցին իր լեզուով, գրականութեամբ, մշակոյթով եւ բարեգործական հաստատութիւններով, որոնց վրայ կ'աւելցնէր հայ մամուլը իր առօրեայ լրագրութեան, որոնք միասնաբար «ունին առաքելութիւն եւ կոչումն որոյ բարձր է յայս Մեր ի գործ ժողովրդական դաստիարակութեան»:

Գարեգին Հայրապետ իր անդրանիկ կոնգրակով կը յորդորէր իր հաւատացեալ հօտը չմոռնալ թէ մեր ազգի միակ «կենդանի» ծառին ոստերն ենք բոլորս որ կը բնակինք հայրենիքի եւ սփիւռքի մէջ, եւ երկուստեք հաւատարիմ մնալու ենք թէ՛ հայրենիքի եւ թէ՛ արտերկրի հիւրընկալ մեր երկիրներուն հանդէպ: Իր վերջին խօսքով Հայրապետը կը յորդորէր «զամենեւին հայրական սիրով պահել զաւանդութիւնս հարցն մերոց, սիրել զազգ մեր եւ զեկեղեցի», ըլլալ երկիրազատ, բարեպաշտ, պարկեշտ, ընտանեակ, որպէսզի բոլոր-

#### Նոր Շրջան

Գարեգին Ա Կաթողիկոսի գահակալութեամբ նոր շրջան մը

ԱՅԺՄԵԱԿԱՆ

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԻ ԴԵՊԻ Ո՞ՒՐ

ՀԱՅԿ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ

Բ. Համաշխարհային Պատե-
րագմը վերջ գտաւ: Ամէնաբախ-
տաւորը, շահաւորը եւ քիչ վնաս
կրողը եղաւ անշուշտ Թուրքիան:
Իսկ մարդկային առաւելագոյն վնաս
ստացողը՝ Ճաբոն, Գերմանիան,
Ռուսիան եւ քիչ մը... Տրեաները
որոնք սակայն, ասոր փոխարէն,
շահեցան Պաղեստինը, երբ (Մեծն)
Անգլիան այս հողամասը նուիրեց
իրենց, զայն ոսկեգօծ ափսէի վրայ
դրած:

Անցան տարիներ: Քանդուած
քաղաքները վերաշինուեցան: Վե-
րանորոգուեցան գործարաններ ու
շէներ: Վերածաղկեցան խոպան ար-
տերը: Արտադրութիւնը գտաւ իր
նախապատեարգմեան մակարդակը:
Անգործ մարդ չմնաց: Սակայն
պէտք կար բուժելու ծանր վիրա-
ւորները, հաշմուածն ու անդամա-
հատուածը, հոգեկան հիւանդը, ար-
մատապէս վերջ տրուելու էր ծայր
առած համաճարակներուն, դար-
ման գտնել անբուժելի խիտերուն:

Այո: Աւերակները վերակա-
ռուցուեցան: Վերականգնեցաւ ինչ
որ կիսափուլ էր եւ վնասուած:
Բայց նիւթականը եթէ վերանոր-
ոգուեցաւ, մնաց՝ հոգեկանը: Պէտք
կար, որ հոգիներու ճարտարա-
պետները լծուէին աշխատանքի:
Հարկ էր վերադաստիարակել նոր
սերունդները, դարձնել զանոնք խա-
ղաղասէր ու շինարար, որ անոնք
ալ չմտածեն կոխի, պատերազմի
ու քանդուած մասին: Մերժեն ռազ-
մապաշտութիւնը (միլիթարիզմ),
տէր կենան մարդկային իրաւունք-
ներու:

Թուեցաւ պահ մը, որ բիրտ
մարդը պիտի վերամարդանայ: Նոր,
ազնիւ ու բարի, խաղաղասէր մարդ-
կութիւն պիտի ստեղծուի: Բայց՝ ի
գուր: Իրականութիւն ասոր ճիշդ
հակառակը եղաւ, կամ՝ ըլլալու
վրայ է:

Հակամարդկայնասէրները
գործի անցան, որ չարիք սերմա-
նեն: Եւ ահա, սկսաւ համաճարակ
մը: Անգլիոյ մէջ մէջտեղ բերին
«Պիթըրլը»ները: Յետ-պատերազմ-
եան նոր սերունդը ոգեւորուեցաւ:
Ան կարծեց նոր, օգտակար ու լաւ
նորութիւն տեսնել: Բայց շուտով,
այդ կազդերուած ու ոգեւորուած
նոր սերունդը ապշած, զարմացած
ու կերպով մը հիքնոսացած, սկսաւ
իյնալ այլասերումի, հոգեկան ու
մարմնական անկումի հոսանքի մէջ:
Երիտասարդութիւնը զմայլած, սի-
րահարուածի պէս, սկսան հետեւի
սա երգի ու պարի իբր թէ «նորա-
րար» համոյթներուն, «կուրք»նե-
րուն, նաեւ՝ մէկզի նետելով դասա-
կան ու ժողովրդային երաժշտու-
թիւնը, ժողովրդային երգն ու
ազգային պարը: Եւ զարմանալին
այն է, որ այս հոգեփոխութիւնը
զինք քաջալերողներ ունեցաւ: Մին-
չեւ անգամ Անգլիոյ թագուհին
«Sir» տիտղոս սուաւ «Beetels»նե-
րուն: Ասոնք ունեցան զիրենք կապ-
կողները: Խաթարուեցաւ բուն, իրա-
կան արուեստը, մեռաւ լրջու-
թիւնը:

Այս խաթարումը, վարակիչ
հիւանդութեան պէս, անցաւ գոյգ
Ամերիկաները, ուր գլխաւորու-
թեամբ էլլիս Բրեյնլի, ԱՄՆ-ի
երիտասարդութիւնը «Ձմայլած»
այս երգիչ-նուագողին անձոռնի
ձեւերուն, սկսաւ կապկել (imitier)
զայն: Կը շարունակէ ընդօրինակել
զայն ու իրեն նմանները (գլխաւոր-
ը... չէ՞ր) մինչեւ այսօր, սիրա-

հարուած «երաժշտութեան» տե-
սակի մը որ վնասաբեր է որքան
թմրեցուցիչը, որուն մէկ ճիւղաւոր-
ումը «Հիբբի»ութիւնն է որ եկաւ
ու կ'ամբողջացնէ «Խնճոյք»ը, որուն
անդամները կը յատկանշուին իրենց
օղերով, ցցուած մագերով, այլան-
դակ շարուածութեամբ:

Ահա այսպէս է, որ երիտասար-
դութիւնը կ'այլասերի: Քաղաքա-
կանութենէն (politic) եւ իրաւ քա-
ղաքակրթութենէն կը հեռանայ: Կը
դառնայ թմրամոլ: Կ'անտեսէ իր
ապրած երկրին եւ սեփական ըն-
տանիքին դժուարութիւնները: Կը
վարժուի ծուլութեան: Կը դառնայ
անհոգ ու անտարբեր, թուլամորթ,
մեղքով «մութ»ի մէջ գործողնե-
րուն, որոնք կ'աշխատին քանդել
երիտասարդութիւնը եւ դարձնել
խառնածին Եւրոպական երկիրնե-
րու ժողովուրդները: Որպէսզի աւե-
լի ուժգին հարուածեն քաղաքա-
կիրթ ժողովուրդներն ու ազգերը:
Այդ «Մութի մէջ» կամ «վարա-
գոյրի ետեւ»էն գործողները իրենց
զարշելի, սատանայական դիտաւոր-
ութեամբ կ'ամբարոյցանեն եւրո-
պական երկիրներու (նաեւ սա գոյգ
Ամերիկաներու) երիտասարդու-
թիւնը, պատանեկութիւնը՝ ասոնց
մղելով թմրամոլութեան, միասե-
ռականութեան, սեռամոլութեան ու
զաղափարազրկութեան:

Այս քանդիչ աշխատանքը եր-
կար ճամբայ կտրած է արդէն:
Ասոր մէկ հետեւանքը չէ՞ իրենց
հեռատեսիլի ու շարժանկարի պաս-
տառներէն յորդող ոճիւրը, պոռն-
կութիւնը, բրտութիւնն ու տմար-
դութիւնը, անզգամութիւնն ու հա-
նոյապաշտութիւնը քաջալերող, տե-
սակ-տեսակ մոլութիւններու մղող
«Ֆիլմ»երը՝ որոնց գումարը օրէ
օր կը բազմանայ: Որպէսզի ստեղ-
ծել տան սխալ, երեւակայական
կարծիք այդ երկիրներու պայման-
ներուն մասին: Ֆիլմերու միջոցաւ
այնքան ճոխ, դիւրին, հրապուրիչ,
հեշտ եւ հետաքրքրական կը ներ-
կայացնեն այդ երկիրներու կեան-
քը, որ դիտող երիտասարդին կար-
ծել կու տան որ կը բաւէ ոտք դնելը
անտնցմէ ներս, որ ուզածը կարե-
նաս ըլլալ եւ ունենալ: Ձեռք ձգել
այդ կեանքի ճոխութիւնն ու հարս-
տութիւնը, ապրիլ առանց յոգնե-
լու, առանց քրտինքի ու աշխա-
տանքի: Կարծել կու տան որ ար-
դարութեան բուն աշխարհն է այն-
տեղ: Հոն չկայ այլեւս մարդու
կողմէ մարդու շահագործում: Ամէն
անձ իր աշխատանքին պտուղը կը
քաղէ: Հոն չկան հիմա գառնուկի
մորթ հագած մարդագայլերը: Ամէն
ոք իր արտադրածին արդար պտուղը
կը վայելէ իր գործունէութեան
ճարպիկութեամբ, խելքով եւ
մտքով, ձեռքի վարպետութեամբ...
եւ ոչ թէ ոճրագործութեամբ ու
մաքսանենգութեամբ: Եւ ահա, թէ
ինչպէս, այդ «Ֆիլմ»երը, հեռատե-
սիլը այժմ ուղեղալուսեցումի կ'են-
թարկեն դիտողը:

Այսքանը բաւարար չըլլար
կարծես: Տօնախմբութիւն-խնճոյ-
քը շարունակուեցան ինչպէս կ'ըս-
ուի սովորաբար, Internet-ի գիւ-
տով: Աշխարհներ ու մարդիկ բաց-
ուեցան իրարու: Երկիրները գրե-
թէ նոյնացան իրարու հետ: Իսկ
առեւտուր, տեղեկութիւններու փո-
խանակում եւ վաճառականութիւն
եւայլն... դիւրացան: Տարբեր ցա-
մաքամասերու վրայ ապրող մար-
դիկ, ակնթարթի մը, «իրարու մէջ
կը մտնեն, կը հարողորուին, կը
տեղեկանան ու կը... հոգեկցին,

ՆԱԽԱԳԱՅ ՕՊԱՄԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ
ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄԸ ՁԱԽՈՂՈՒԹԵԱՆ ՍԵՄԻՆ
ԾԵՐԱԿՈՅՏԻ ՄԷՋ ՊԵՏՔ ԵՂԱԾ ՁԱՅՆԵՐԸ
ԱՆԲԱԲԱՐՈՒ ՊԻՏԻ ԸԼԼԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԳՐԱՃԵԱՆ

Հակառակ անոր որ թէ՛ Ներ-
կայացուցիչներու Տունը եւ թէ՛
Ծերակոյտը արդէն քուէարկեցին
բարեկարգումի օրինագիծեր,
առողջապահական ապահովագրու-
թեան բարեկարգումը ճախողու-
թեան սեմին հասած է, կամ նոյնիսկ
արդէն ճախողած կարելի է նկատել՝
նախագծուած ձեւին տակ: Այս
ճախողութեան գլխաւոր պատճա-
ռը պիտի ըլլայ, մահացած ծերա-
կուտական էտուրտ Քէննեդիի
կրթութիւն համար անսպասելիօրէն
ընտրուած հանրապետական մը՝
Սքաթ Պրուան անունով:

Ընտրութենէն անմիջապէս
ետք, այս ծերակուտականը յայտա-
րարեց որ արգելք պիտի հանդիսա-
նայ օրինագիծին (քուէարկուած)
կիրարկման՝ այնպէս, ինչպէս բա-
նաձեւուած է:

Պէտք է ըսել, որ դեմոկրատ-
ները ուշացան երկու օրինագիծերը
համադրել եւ ներկայացնել նախա-
զահին, ստորագրութեան համար՝
որպէսզի օրէնքի վերածուի: Այս
առթիւ, կարգ մը լրագրողներ
կ'ըսեն, թէ դեմոկրատները կրնան
տակաւին համադրուած օրինագիծ
մը պատրաստել՝ եթէ շուտ շար-
ժին, այսինքն մինչեւ որ նորընտիր
հանրապետականը երդումը կատա-
րէ: Այս կարելիութիւնը շատ քիչ
հաւանական է:

Պէտք է ըսել նաեւ, որ քուէ-
արկուած օրինագիծերը շատ բարդ
եւ դժուար հասկնալի ոճով շա-
րադրուեցան՝ ստիպումովը առող-
ջապահական եւ դեղորայքի ընկե-
րութիւններուն: Աւելի բարդ եւ
զրեթէ անհասկնալի է Ծերակոյտի-
նը, որ քիչ շատ տարբեր է Ներկա-
յացուցիչներու Տան քուէարկած
օրինագիծէն: Այս բարդութեանց
եւ անհասկնալիութեան անդրա-
դարձաւ, ուրիշներու կարգին, Գա-
լիֆոնիոյ ծերակուտական Տայլէն
Փայնսթայնը, դեմոկրատ մը ըլլա-
լով հանդերձ:

Ամենէն կարեւոր եւ հիմնա-
կան կէտը՝ առողջապահական ապա-
հովագրութիւն տայ շուրջ 35 միլիոն
ամերիկացիներու, որոնք չունին
տակաւին նման ապահովագրու-
թիւն մը, արդէն իսկ ջնջուեցաւ:
Այս ջնջումը խստօրէն դատապար-
տեց Los Angeles Times-ի գլխաւոր
լրագրողը:

ԲՈՂՈՐԷՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ
ԳԼԽԱՒՈՐ ԿԵՏԵՐԸ

Ներկայացուցիչներու Տան
օրինագիծէն դուրս ձգուած կէտերը՝
Ծերակոյտին կողմէ, պիտի ջնջուին
նոր օրինագիծէն, եթէ եւ երբ
պատրաստուի այդ, անշուշտ տար-
բեր բանաձեւումով մը: Մինչեւ

իրար կ'ընդօրինակեն:

Այս անմիջականութիւնը եթէ,
կերպով մը, իր օգտակարութիւնը
ունեցաւ, ուրիշ իմաստով ալ ունե-
ցաւ եւ կ'ունենայ քայքայիչ հետե-
ւանք:

Առաջին տուժող-վնասուող-
ներն եղան, կ'ըլլան երիտասարդ-
ներն ու պատանիները: «Chat»
ըսուած եւ «Face Book» կոչուող
գործողութիւնները որոնք կը կա-
տարուին «Internet»ով եւ «Ամէն
բանէ» տեղեկ կը պահեն մարդս,
շատ գէշ հետեւանք կ'ունենան մեր

իսկ քանի մը հանրապետականներ
կ'ըսեն թէ ամէն ինչ գէրօյն պէտք
է սկսիլ: Այս հաւանականութիւնը
չնչին է, քանի որ միայն քանի մը
օրէնագիծներու փափաքն է: Բոլոր
հանրապետականներու դիրքը լա-
ւագոյն ձեւով ամփոփեց Olympia
Snow անունով ծերակուտական մը,
ըսելով. «Ամէն ինչի ոչ պիտի
չըսուի, այլ վերջ ի վերջոյ բանի
մը պիտի քուէարկենք: Իսկ ծաղ-
րանկարիչ մը, բարեկարգումի սոպ-
րակը խտացնելով 5 նկարներու
մէջ, հասաւ կմախքի մը եւ ահա
այս միակն է, ըսաւ, որ ընդունելի
պիտի ըլլայ բոլորին կողմէ: Այլ
խօսքով, բարեկարգում մը պիտի
չըլլայ՝ այլ միայն առողջապահա-
կան ապահովագրութեան փոփո-
խութիւն մը, ինչ որ Օպամայի
կողմէ կը կոչուի տակաւին «բարե-
կարգում», «ժողովուրդին ուզածը
պիտի ըլլայ» խօսքով:

Ուրեմն նշեք կարելիութիւն-
ները.

1) Ինչպէս որ Ծերակոյտի
օրինագիծին տարբերակին մէջ բա-
ցատրուած է, ահաւոր ծախսերու
բեռին մէկ մասը պիտի փոխանց-
ուի միջին դասակարգին:

2) Օրէնսդիրները պիտի սահ-
մանեն առողջապահական ապահո-
վագրութիւններու մերժումը անոնց
որոնք արդէն ունեցած են նման
հիւանդութիւն մը:

3) Ապահովագրութիւն պիտի
չմերժուի անոնց, որոնք հիւան-
դութեանց հարցեր ունին, եւ կամ
որոշ հիւանդութեան մը հակամէտ
են:

4) Երիտասարդները կարելիու-
թիւն պիտի ունենան մաս կազմելու
իրենց ծնողքին ունեցած կամ ստա-
նալիք ապահովագրութիւններուն:

5) Օգնութիւն փոքր առեւտ-
րականներու եւ քիչ եկամուտով
մարդոց վճարելիք ապահովագր-
նին:

6) Փոփոխութեան ենթարկել
Մէտրեքերը, որպէսզի վճարուին
որակաւոր ինամքի, փոխանակ ըն-
թացիկ հիւանդութիւններու ծա-
ուայութեանց կողմի մը:

7) Ապահովագրուելու այլ դիւ-
րութիւններ ալ պիտի տրուին:

Շեղում մը ընելով, պէտք է
ըսել որ նախագահ Օպամայի վրայ
ծանր կշռեց վերոնշեալ հանրապե-
տական Սքաթ Պրուանի ընտրու-
թիւնը: Եթէ մեր նախագահը յա-
ջորդ ամիսներուն չկարենայ լու-
ծել Ամերիկայի տնտեսական եւ
ֆինանսական տագնապները, վար-
կը դեռ եւս պիտի իջնէ: Կորուստ
մը կրնայ ըլլալ հայերուն համար,
քանի որ շատ յաճախ դեմոկրատ-
ները աւելի նպաստաւոր եղած են
հայկական հարցերուն, քան թէ
հանրապետականները:

պատանի-երիտասարդ տղոց ու աղ-
ջիկներուն վրայ: Ասոնք կը հա-
ղորդուին... բաներու հետ շատ
կանխահասօրէն եւ... գուհկաբար:
Այս շատ մանկամարդ տղոց եւ
աղջիկներուն կը հեռացնեն մեր
աշխարհէն... աւելի նոյն կը տանին
աշխարհ մը գոր տանելը դեռ շատ
կանխահաս է իրենց համար, աղէ-
տաբեր՝ իրենց հոգեմտաւոր կազ-
մաւորումին:

Ըլլալ ծնողապէր, տիպար մը,

# ԳՐԱԿԱՆ

## ԵՐՈՒԽԱՆ (ԵՐՈՒԿԱՆԴ ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ) ՆՈՎԵԼՆԵՐ

Ս. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
(Շարունակում և մախրող թիւէն)

1910 թ. Յուլիսի 4ին Երուխանը հրաժարում է «Արեւելք օրաթերթի խմբագրի պաշտօնից: Քիչ անց նրա փոխարեն խմբագիր է նշանակում Երուխանը Օտեանը: Երուխանը կրկին ուղի է դնում ուսուցչական ապարեզը, ստանձնելով Սկիւտարի Ս. Խաչ Ազգային վարժարանի տնօրէնութիւնը, որ վարում է մինչեւ 1913 թուականը: Մանկավարժական աշխատանքին գուզնութաց նա վերադառնալու աշխուժացում է իր գրական գործունէութիւնը՝ եռանդուն կերպով աշխատակցելով «Շանթ», «Ոստան», «Հայ գրականութիւն», «Ամէնուն Տարեցոյցը» հանդէսներին: Երուխանի նովելներից շատերը՝ «Ձկնորսին սէրը», «Յաջողութեան Գաղտնիքը», «Քաւութիւն», «Մեռելներուն Ջրկիրը», «Ջատիկն ի ՀասաՊէլլի», «Մրցում» սպազբուում են վերոյիշեալ հանդէսներում: 1911 թ. Կ. Պոլսում լոյս է ընծայում Երուխանի նովելների եւ պատմութեան քննարկի մի փոքր հատորիկ՝ «Կեանքին մէջ» խօսուն վերնագրով: 1912 թ. «Ոստան» հանդէսում սպազբուում է նրա «Հարազատ Որդի» վիպակը:

1913 թ. Օգոստոսին Երուխանը ընտանիքով մեկնում է Խարբերդ՝ Մեգիրէի Ազգային վարժարանի տեսչի պաշտօնավարման: Այստեղ նա ծաւալում է մանկավարժական վիժխարի աշխատանք: Խարբերդի առաջնորդ Պսակ վարդապետի (Ծ. Վրդ. Տէր Խորէնեան) աջակցութեամբ Երուխանը Ազգային վարժարանը բարձրացնում է ճեմարանի աստիճանի եւ հայկական դպրոցների համար պատրաստում գործիմաց ուսուցիչներ:

Հեռավոր գաւառում, սակայն, Երուխանը չի սահմանափակում սոսկ մանկավարժական աշխատանքով: Նա շրջագայում է գիւղերը եւ ուշի-ուշով ուսումնասիրում գաւառի կեանքը, որ խուլ ծալքերը էջ առ էջ բացում են նրա հայեացքի առջեւ: Իւրաքանչիւր քայլափոխին նա լսում է շահագործող հայ աշխատավորի դառնակակիծ վիշտը, տեսնում նրա պատուի ստորացումը, բռնութիւն, շարագործում:

Խարբերդից Երուխանն աշխատակցում է Կ. Պոլսի «Ժամանակ» («Հեռաձայն») օրաթերթին: Այստեղ սպազբուում են նրա յօդուածները, պատմութեան քննարկ, ինչպէս եւ ճանապարհորդական նոթեր՝ գրուած Խարբերդի ճանապարհին եւ Խարբերդում: Այդ գործերից առանձնապէս ուշագրաւ է «Վրէժ»-ը նովելը: Գաւառային կեանքի ուսումնասիրութիւնը աւելի է լայնացնում գրողի մտահորիզոնը: 1913 թ. Սեպտեմբերի 30ին Երուխանը իր հարազատներին գրում է. «Ինձի համար ուսումնասիրութեան հանք մըն է այս երկիրը եւ այս կեանքը: Եթէ ողջ մնամ, յուշատետրս լեցուն կը դառնամ Պոլիս»: Սակայն, նրա գրական, մանկավարժական եւ հրապարակախօսական բազմաբովանդակ գործունէութեան ծաղկուն շրջանում սկսում են քաղաքական վայրիվերումներ: Երիտասարդ թուրքերը ինամբով նախապատրաստում եւ սկսում են իրագործել հայերին ֆիզիքայէս բնաջնջելու հրէշաւոր ծրագրերը:

Ծայր աստիճան սաստկանում է նաեւ Խարբերդի հայութեան կեանքը: 1914 թ. Հոկտեմբերի 11



թուակիր նամակում Երուխանն իր հարազատներին յայտնում է. «...Անպատմելի է հոգեկան վիճակս, ասանկ ատեն մը Անատոլի խորերը գտնուելը «չորուի չոճուիտով՝ դիւրին բան չէ: Ողջ առողջ օր մը զիրար պիտի տեսնե՞ք արդեօք»: Երուխանի անհագատութիւնը պատահական չէր: Բազմբանազ ծաղիկներին եւ զեղեզղուն սոխակների դրախտավայրը՝ Ծոփաց աշխարհը, մուսուլման էր: Դալարազեղ բնութիւնը ապրում էր գարնանամուտի իր հրաքանչ գարթօքը, երբ սպանդի սեւ ամպերը կու տակուցին կուսական բնութեան լազուր երկնակամարում: Մոլեգնում է դաժան հալածանքը: Առանձնապէս հետապնդում են հայ մտաւորականները: 1915 թ. Մայիսի 1ին ձերբակալում են Երուխանը եւ Պսակ վարդապետը: Այնուհետեւ բանտի նկուղներն են լցում թլկատինցին եւ Եփրատ քոլէճի դասատուները: Թուրք դաժարկում են ներոնական տանջանքներին: Նրանց շղթայակապ շրջում են փողոցներում ու շուկաներում, թքում, խոշտանգում ու ծաղրում: Մի քնախ օր յետոյ «ուղած կծիկներ դարձած» անճանաչելի ձերբակալուածներին փակ կառքերով տանում են Տիարապէր: Չորս ժամուայ ճանապարհ անցնելով, նրանց իջեցնում են Մաստառ սարի ստորոտում, Տեւէ-Պոյնի կոչուած վայրում, եւ կացինով ու մանգաղով գազանաբար գլխատում են նրանց: Մաստառը, որ ստեղծագործական ներշնչումների աղբիւր էր Խարբերդի գրողների համար, դառնում է նրանց յօշոտման տիտուր ու անխօս վկան: Թրքական անողորմ եսթադանի զոհերն են դառնում նաեւ Երուխանի եւ թլկատինցու ընտանիքների բոլոր անդամները: Այդ սպանդանոցը յետագայում կոչւում է մահուան ձոր:

Եւ այսպէս, ստեղծագործական անխոնջ պրպտումների եւ տաղանդի բուռն հասունացման պահին նահատակուեց արեւմտահայ նովելային գրականութեան եւ ռեալիստական վէպի ամենախոստումնալից ներկայացուցիչ՝ Երուխանը՝ Ապրիլեան պանթէոնում չունենալով իր սեփական շիրմաքարը:

\*\*\*

Երուխանը նուրբ դիտողականութեամբ օժտուած նովելիստ է: Նրա նախընտրած գրական հերոսները աշխատավոր, հասարակ մարդիկ են, որոնց հետ նա կապուած է բիւրաւոր թելերով եւ խորապէս գիտի նրանց կեանքը, կենցաղը, զբաղմունքը: Պարզ, անխարդախ ու անշարք ամբողջ նրա համար «հեւացող մէջ», որի էջերը կարդում է

«անճառ չափշտակութեամբ»՝ նրա մէջ տեսնելով բարոյական բարձր արժանիքներ ունեցող հերոսներ: Այս տեսակէտից նրա առանձնապէս «Պապուկը» նովելը յատկանշանական գործ է: Այն միեւնոյն ժամանակ իւրատեսակ գրական մանիֆեստ է, որով հեղինակը ի լուր ամէնքի յայտարարեց յատակի մարդկանց խոհերի ու ակնկալութիւնների համոզուած երգիչը դառնալու իր պատրաստակամութեան մասին: Եւ պէտք է ասել, որ նա ընդմիշտ հաւատարիմ մնաց գրական իր երգմանը: Բնորոշն այն է նաեւ, որ «Պապուկ»ի հերոսները՝ արհամարհուած աշխարհի մարդիկ, նոյնիսկ անուն չունեն: Լաւագոյն դէպքում նրանք «մարդուկ» են կոչւում:

Իրար հետեւից սպազբուող նրա նովելներից ընթերցողներին են ներկայանում ձկնորսներ, նաւաւարներ, լուսցարարուհիներ, մրգավաճառներ, ջրկիրներ, չղկողներ, հրէջներ, երկաթագործներ, որք ու անօթեւան աղքատներ, օտար երկնքի տակ դեզերող գաղթականներ, օրուայ դառն ու չարքաշ աշխատանքից կքուած եւ գինետան կեղտոտ ակիւնում անձնական վիշտը բաժակի մէջ խեղդող ու խոր հաւաչող արհեստավորներ: Երուխանը զարմանալի վարպետութեամբ կարողանում է ընտրել եւ նովելի միապլան սիւժէում պատկերել վերոյիշեալ հերոսների կեանքի որեւէ դրուագը: Յաճախ այդ դրուագները շնչում են խոր դրամատիզմով:

Երուխանի ոճը վերին աստիճանի լակոնիկ է: Նրա նովելները ստիպում են ընթերցողին լարել միտքը, խորհել եւ գտնել նրանցում թաքնուած ու չասուած գաղտնիքները:

Երուխանի որպէս տաղանդաւոր նովելիստի մասին շատ բարձր կարծիք են յայտնել մի շարք գրողներ եւ քննադատներ: Վրթանէս Փափագեանը իր «Պատմութիւն Հայ Գրականութեան» շրջագրում, խօսելով Երուխանի հոգեբանական նուրբ վերլուծութիւնների մասին, գրում է. «Թերեւս միայն Չոհրապէն է, որ նոյնքան կատարելութեամբ գիտէ վերլուծել հոգեբանական որոշ երեւոյթներ եւ զեղուն գոյներով նկարել այս ու այն տիպարները»: Չարագանելով իր միտքը, Փափագեանը թեմատիկայի ընտրութեան, փոխադարձ, քնքուշ ու անբիծ սիրոյ (ոչ զգայական սիրոյ, ինչպէս Չոհրապէի մօտ է մեծ մասամբ) պատկերման վարպետութեան տեսակէտից գերապատուութիւնը տալիս է Երուխանին:

«Ոստան» եռամսեայ պարբերագիրը իր 1911 թ. թիւ 2-ում խօսելով Երուխանի «Կեանքի Մէջ» ժողովածուի մասին, գրում է. «Ինտող մը, հոգեբան մը ու հրապուրիչ պատմող մը կայ այդ գրողին մէջ ու որքան խոնարհ դասերու մէջ կ'իջնէ ինք, այնքան թանկագին կը դառնան իր վերլուծումները... գեղեցկագոյն են «Եւնիկէ»-ն, «Չուկին Փոխարէն»-ը, «Քարիտեգճին», «Ձկնորսին Սէրը»: Չեմ գիտեր ասոնք ունի՞ր իրենց նմանները պոլսահայ կեանքը նկարագրող գրա-

կանութեան մէջ» (էջ 445): Երուխանի ծննդավայրը եղել է ամիրաների օրրանը: Այս արուարձանում հասարակական կեանքը միշտ աչքի է ընկել շեշտուած հակադրութեամբ: Ամիրաների շքեղ սպարանքներից լուող ոսկու ժխորին միախառնուել են աշխատավորական անշուք խրճիթներից պոկուած դառն հառաչանքները: Երուխանի ծննդեան թուականը՝ 1870ը, ամիրայական տան կործանման վերջին տարեթիւն է, սակայն ստեղծագործող Երուխանի օրօք էլ հասարակական կեանքը մնում էր սոցիալական ծայր աստիճան անհաւասարութեան պայմաններում:

Երուխան իր նովելներում պատկերում է հաւաւոր թշուառութեան այդ աշխարհը: Նրա նկարագրած խրճիթները, ուր պարում էին ձկնորսները, իրենց անհիւրընկալ, խարխոլ ու փրփուած վիճակով չիչեցնում են Նար Դոսի «Մեր թաղը» պատմութեամբ աշխարհ տնակները: «Ծովին եզրքէն քիչ մը ասդին կը գտնուէր տնակներու դէս ու դէն կքած, ծոճուած շարքը, որուն մէջ կը բնակէին ձկնորսի ընտանիքները» («Գողը»), «Տունը, որուն դուռը կը գարնէր նաւավար Պետիկ, ցած, շատ ցած տուն մըն էր, այնքան ցած, որ պիտի կարծուէր, որ այդ սաստակաւ անձրեւին տակ պիտի կքէր, գետնին փակէր, կաթուածահար մարդու մը պէս, որ կը տապալի յանկարծ անշուք, անշունչ: Միացող կանթեղ մը տարտամ, դողող լոյս մը կը տարածէր ցած ձեղունին վրայ, որուն սեւ մզլոտ հեծակները սարդի ոտայններով ծածկուած էին, փրփուած պատին վրայ, ուր անձրեւին ջուրը առուակներ կազմած էր» («Հիւժախտաւորը»):

Այս տնակներում տեղի է ունենում մարդկային մի ամբողջ ողբերգութիւն: Խրճիթներից մէկի մէջ վաղաժամ մեռնում է նաւավար Պետիկի աղջիկը՝ Թոքախտաւոր Աննան: Ալիքսանը սիրած աղջկայ մօտ բժիշկ հրաւիրելու համար, հարկադրուած, դիմում է գողութեան. ձերբակալում է եւ ինքնասպանութեամբ վերջ տալիս իր կեանքին («Հիւժախտաւորը»): Նման պայմանների մէջ մեռնում է Փերուզը: Սիրած տղան՝ ձկնորս թումիկը, որ շրջապատում ճանաչուած էր որպէս քաջ, ազնիւ ու աշխատասէր տղայ, դեղորայք գնելու համար նոյնպէս դիմում է գողութեան, բանտ նստում եւ յետոյ կորցնում հոգեկան հաւասարակշուութիւնը («Մեռելներուն Ջրկիրը»):

Ծովը, որ ձկնորսների ապրուստի միակ աղբիւրն է, վերջին հաշուով դառնում է նրանց գերեզմանը: Ծովի գոռ ալիքներին կու են գնում Հաճի Թումայի ձկնորս որդիները («Գողը»), Յովակը («Ծովափին Աղջիկը»), Հուսէփը («Լուսցարարուհին»), իսկ դեռեւս կենդանի մնացած ձկնորսներն ու նաւավարները լուռ համակերպութեամբ նայում են երբեմն խաղաղ, երբեմն փոթորկալոյց ծովին, հաշտուած իրենց դրութեան հետ, պատճառաբանելով թէ «աս գենաթիւն տոնը աս է»:

(Շարունակելի 2)

Ձեր Ծանուցումները Վստահեցեք  
**«Մասիս»** Շաբաթաթերթին  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863  
 massis2@earthlink.net



# ԱԶՆՏ ԲԷՍ

## Ո՞Վ ՊԻՏԻ ՊԱՅՊԱՆԵ

Խմբագրական ժամօրուփուն - Ստորել կու տանք Մխիթարեան միաբանութեան մասին սոյն շահեկան յօդուածը կարգ մը յապաւումներով:

### ՈՍԿԱՆ ՄԻՒԻԹԱՐԵԱՆ

Ինչպէս յայտնած էի իմ նախորդ յօդուածիս մէջ թէ, եթէ ընդհանուր ակնարկ մը նետելու ըլլանք Մխիթարեան Միաբանութեան ընդհանուր կեանքէն ներս, կ'անդրադառնանք որ չկայ մէկը, որ հաշիւ պահանջէ Մխիթարեան դեկավարութենէն, ուր այսօր խնդրոյ առարկայ են Հայ Ժողովուրդի դարաւոր գանձերը, որոնց պաշտպանութեան համար հաշուետու է նոյն ինքն Մխիթարեան Միաբանութեան դեկավարութիւնը:

Անմիջապէս միտքս կու գայ վաթսուական թուականներուն երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութենէն գողցուած Ձեռագիրներու վաճառքի անմոռանալի դէպքերը, Անգլիական Sotheby աճուրդի հաստատութեան միջոցաւ, ուր անմիջապէս տեսանք, թէ ինչպէ՞ս գորաշարժի անցան եւ ահագանգ հնչեցուցին մեր Նուիրապետական Աթոռները, Հայկական կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ հայկական մամուլը իր հետ ունենալով Հայ արժէքներու հանդէպ բժախնդի հայրորդիները:

Եօթնաստուական թուականներէն սկսեալ, տեսանք արդէն թէ ինչպէս հանգուցեալ Հ. Պօղոս Վրդ. Անանեան Աբբա՛օր օրով տեղի ունեցան կալուածային մեծածաւալ ձեռքերու մեր ինչպէս նաեւ շինարարական ձեռնարկներ, որոնց գլխաւոր նպատակն էր մնայուն եւ հաստատութեան եկամուտներ ապահովել միաբանութեան համար: Դժբախտաբար սոյն մեծղի գործարքներու մատակարարումը, միաբաններու կողքին չունեցան մասնագէտ աշխարհականներ, որոնք կարենային մօտէն հետեւել եւ որոշ ապահովութիւն մը ընձեռել վերոյիշեալ ծրագիրներուն: Միւս կողմէ, իտալական անակագած ու պարտքերու լուծին տակ գտնուող որոշ ընկերակցութիւններու հետ գործառնական բաժնեկցութիւնները, դուր բացին մեծագումար պարտքերու, որոնք Մխիթարեան Միաբանութիւնը ակնյայտ անակցութեան մը սեմին հասցուցին: Այս անխոհեմ քայլերը սրբագրելու համար, Միաբանութիւնը պարտաւոր եղաւ ծախելու շատ մը թանկարժէք կալուածներ, ներառեալ Վենետիկի Ս. Մարկոս Հրապարակի վրայ գտնուող խանութները, վճարելու համար իր պարտքերը պարտատէրերուն: Չմոռնանք այստեղ յիշեցնելու որ Միաբանութեան վիթխարի պարտքերու պատճառով կալուածներու մեծամասնութիւնը կարճ ժամանակամիջոցի մէջ չնչին եւ շուկայական արժէքէն շատ ցած գիներով շտապ վաճառուեցան:

Նմանօրինակ անխոհեմ քայլեր յաջորդաբար պատճառ դարձան նաեւ, որ Միաբանութիւնը վերատեսութեան ենթարկէր իր տնտեսական ընդհանուր վիճակը, եւ ստիպուած ըլլար փակելու իր բազմադարեան ու պատմական տպարանը, որուն հետեւանքով նուազեցան նաեւ գրքերու տպագրութիւնները: Ահաւասիկ այս հրատարակութիւններու ճամբով էր որ Մխիթարեան Հայրերը, իրենց աշխատասիրութեամբ եւ բանասիրութեամբ, օտարներուն ներկայացուցին եւ ծանօթացուցին Հայ կրթականութեան տիտանները, ինչպէս նաեւ Հայ Ժողովուրդի պատմութիւնը, երբ մեր Նուիրապետական Աթոռները կը հիւճէին Օսման-

եան եւ Ռուսական գերիշխանութիւններու երկաթեայ բազուկին տակ:

Դժբախտաբար, Մխիթարեան Միաբանութեան այսօրուայ պատկերը ամբողջութեամբ տարբեր է եւ մեր աչքին առջեւ կը պարզէ դառն եւ տխուր իրականութիւններ: Յաջորդող կարգ մը Աբբասայրերու ձախակեր գործունէութիւնը, նոյնքան իրենց տխուր անդրադարձը ունեցան Միաբանութեան վարկին եւ ընդհանրապէս միաբանութեան իւրաքանչիւր անձի հոգեբանութեան վրայ: Ոմանք յուսահատ հեռացան միաբանութենէն, ոմանք աշխատանքի ասպարէզէն, ուրիշներ փոխեցին իրենց ծառայութեան մարզը, ոմանք ստեղծեցին իրենց անձնական աշխատանքի դաշտը եւ գրեթէ գործեցին անկախ: Բարեբախտաբար խուճմը մը պարկեշտ եւ անշահարնդիր միաբաններ մնացին պատնէշի վրայ այն ակնկալութեամբ որ օր մը արշալոյսը կրկին կը ծագի եւ իրենք աւելի պարզ եւ յստակ կը տեսնեն Հայ Մշակութի ծառայութեան անդատանին պահանջները եւ անգամ մը եւս իրենց բազուկները սոթտելով կը նետուին ասպարէզ, առաջին առիթով փրկելու Մխիթարեան Միաբանութեան վարկը, ու ապա վերանորոգ հոգիով կենդանացնել եւ կերտել կը փորձեն, այն ինչ որ վերջին քառասնամեակին կործանած էին անխոհեմ, անջիղ եւ անպատասխանատու ղեկավարները:

Ահաւասիկ այս ակնկալութիւնները շատ կարճ ժամանակի համար ետուն գոյալիճակ մը ստացան երբ Մխիթարեան Միաբանութեան երկփեղկումը վերջ գտաւ Յուլիս 2000 թուականին, Վատիկանի ստիպողական ջանքերով: Ճիշդ այս ատեն էր երբ Մխիթարեան Միաբանութեան, Վենետիկի եւ Վիեննայի արդիւնաշատ գոյգ ճիւղերը իրագործեցին մեր Հայ պատմութեան հազուագիւտ դրական արարքներէն մին՝ այսինքն է «գործադիր վերամիաջուծը»: Միաբանութիւնները անգամ մը եւս որպէս մէկ սիրտ ու հոգի, իրենց միացեալ ուժերով լծուեցան գործի, ամբողջականօրէն նուիրուելու Հայ նոր սերունդի դաստիարակութեան: Ափսոս որ միութեան ակնկալութիւնները շատ արագ ցնդեցան շոգիի նման: Ինչո՞ւ. որովհետեւ ընտրուեցաւ ղեկավար մը, յանձինս, որ ոչ միայն չկրցաւ հին վէրքերուն սպեղանի գտնել, այլեւ իր անխոհեմ, անպատասխանատու, անկազմակերպ եւ անձնակեղծ շախտանքներով՝ բորբոքեց հին վէրքերը իր դէմ դարձնելով թէ՛ Վենետիկի եւ թէ՛ Վիեննայի Միաբանութեան անդամները:

Մեր ըսածները փաստելու համար, այստեղ պէտք է վկայակոչել 2004 թուականի դատավարութիւնները ընդդէմ Լոս Անճէլըսի Մխիթարեան վարժարանին, որ մինչեւ վերջերս կը վայելէր, Վիեննայի Մխիթարեան ուխտէն, Հայր Օգոստինոս Սեքուլեանի ղեկավարութիւնը ամբողջական նուիրուածութեամբ: Տիրահռչակ եւ միջ-միաբանական այս պայքարները որ անշուշտ հակառակ էին մեզի ծանօթ Մխիթարեան համերաշխութեան եւ միութեան գաղափարականներուն, բարեբախտաբար կանգ առած էին 2006 թուականին, աւելին՝ երկուստեք ծանր նիւթական կորուստներու առաջին առնելու շարժառիթով քան թէ բարոյական արժէքներու

ստիպողութենէն մղուած եւ սակայն այս անպատուաբեր դատավարութիւնները միայն ջիղեր մաշեցուցին, վարկեր մրտոնեցին եւ անուններ վարկաբեկեցին յանուն ոչինչի:

Այս անպատասխանատու ղեկավարութեան հետեւանքն է նաեւ վերջին տարիներուն տեղի ունեցած գողութիւնները, որոնց համար ստորագրեալ ահագանգ կը հնչեցնէ մամուլով իրենց անհոգ եւ անտարբեր թմբիրէն արթնցնելու մեր դեկավարութիւնը, որպէսզի ոտքի ելլեն եւ հաշիւ պահանջեն Մխիթարեան դեկավարութենէն, մեր դարաւոր թշնամիէն հազիւ ազատած, մեր թանկագին եւ սրբազան գանձերուն համար: Այս գողութիւններէն մի քանիսն անդրադարձայ իմ նախորդ յօդուածիս մէջ, բայց այն ինչ որ ես հրամցուցի հանրութեան, միայն փոքրիկ չնչին մէկ մասն էր կողոպտին որ այսօր կը շարունակուի գանազան կերպերով եւ գունաւորումներով ինչպէս անդրադարձած եմ իմ նախորդ յօդուածիս մէջ (Ով է գողը յօդուածը կարելի է ընթեռնուել hetq.am կայքէջին վրայ, Սփիւռք ենթախորագրի տակ): Բոլոր ժամանակներէ աւելի ԱՅՍՕՐ, իւրաքանչիւր Հայ, բարոյական պարտաւորութիւն ունի հաշիւ պահանջելու, ապա թէ ոչ, մեր լուծութեամբ մեղսակից կը դառնանք այս աններելի կողոպտին:

Չենք կրնար անտարբեր մնալ, եթէ ունինք անխորտակելի պաշտամունքը հանդէպ մեր մշակութային գանձերուն: Ժամանակն է որ անմիջապէս ստեղծենք վարչական մարմիններ, կազմուած մասնագէտ անհատներու կողմէ, որոնք անյապաղ պիտի աշխատին պարկեշտ միաբաններու հետ եւ պիտի ցանկազրեն Մխիթարեան Միաբանութեան տրամադրութեան տակ ի պահ դրուած բոլոր մշակութային հարստութիւնները (գիրքեր, ձեռագիրներ, քարտէսներ, գորգեր, զգեստներ, ոսկեղէն, արծաթեղէն դրամներ եւ իրեր, արուեստի գործեր) ըլլան անոնք Վենետիկի եւ կամ Վիեննայի վանքերէն ներս:

Բացի մեր մշակութային գանձերէն, անհետ կը կորչին նաեւ մեր ազգապատկան կալուածները, որոնցմէ իւրաքանչիւրը, դարբերու ընթացքին նուիրուած են Մխիթարեան Միաբանութեան այն համոզումով որ անոնք պիտի պահուին որպէս աւանդ գալիք Հայ սերունդներուն համար: Դժբախտաբար, այդ կալուածներէն շատեր ծախուած են այսօր գանազան պատճառներով, ոմանք հասկնալի պատճառաբանութիւններով, որոնք կարգին են անպատասխանատու եւ անհաշիւ մտնումները, իսկ ոմանք ալ գուտ անձնական շահագիտական նպատակներով:

Այսօր Մխիթարեան Միաբանութեան երկու ճիւղերն ալ ունին իրենց հսկայական եկամտաբեր կալուածները, որոնց պատասխանատուութիւնը միշտ ալ յանձնուած է անուանական մատակարարութեան մը: Անկարելի է երեւակայել որ անձ մը կարենայ տնօրինել այդ բոլորը, երբ այս կալուածները սխուռած են, միջին Արեւելքէն մինչեւ Հայաստան, Եւրոպայէն մինչեւ Հարաւային Ամերիկա: Կրնա՞ք հաւատալ որ այսքան հարստութիւն կուտակած հաստատութիւն մը այսօր կը կանգնի ստոյգ անակցութեան եզրին, պարզապէս անոր համար որ կամայականութեան եւ անձնակեղծ ղեկավարութեան զոհ են այս բոլորը: Ասոնց վրայ աւելցնենք նաեւ, համայնավարութեան օրերուն Վիեննական Մխիթարեան Միաբանու-

թենէն բռնագրաւուած կալուածներուն ցանկը, որոնք դժբախտաբար կը մնան պատանդ պատկան պետութիւններու մօտ, պարզապէս անոր համար որ չկայ լուրջ ղեկավարութիւն մը որ մտահոգուի այս հարցերով, ի վերջոյ ազգային կալուածներով: Այսօր եօթը տարիներէ ի վեր կը խնդրեմ որ Պուլկարիոյ Ֆիլիպպէ (Plovdiv) քաղաքի Մխիթարեան վարժարանի կալուածը ետ առնելու ջանքերը հարկ է աշխուժացնել պատկան մարմիններու մօտ, նախ քան որ ետ պահանջելու ժամանակամիջոցը դադրի ըստ օրէնքի, բայց դժբախտաբար մեր բոլոր խնդրանքներն ալ հանդիպեցան խուլ ականջներու:

Նոյն ճակատագրին արժանացան նաեւ Վենետիկի Միաբանութեան պատկանող, Հունգարիոյ մայրաքաղաք, Պուտաբէշտի կալուածներն ալ, բռնագրաւուած համայնավարութեան օրերուն, որոնք հաւանաբար միլիոնաւոր տոլարներ կ'արժեն այսօր, եւ սակայն կը մնան տակաւին պետութեան ձեռքը պարզապէս անոր համար որ չկայ լուրջ ղեկավարութիւն մը որ մտահոգուի այս կալուածներով, եւ իր արդար իրաւունքները ետ պահանջէ: Այս կալուածի շուրջ մեր առաջարկած բոլոր թեթաղութիւնները, նոյնպէս հանդիպեցան խուլ եւ անտարբեր ականջներու: Այստեղ կ'արժէ յիշեցնել նաեւ որ Պուտաբէշտի ժողովրդապետական եկեղեցին, ուր կը կատարուէին կիրակնօրեայ Հայկական Ս. Պատարագները, այսօր բռնագրաւուած կը մնայ տեղուին Լատին Արքեպիսկոպոսին կողմէ: Արքեպիսկոպոսը բռնագրաւեցաւ Մխիթարեան Միաբանութեան կալուածը, ինչպէս նաեւ այնտեղ գտնուող հայկական գանձերը: Այս բոլորին ի տես ոչ մէկ քաջութիւն եւ յանդուժութիւն բողոքներ կայացնելու Վատիկանին: Իրողութիւն մը որ մեզի կրկին մտածել կու տայ:

Նոյնպէս տակաւին ժամանակի բախտին ձգուած են նաեւ Ռումանիոյ, Պուքարէշտ քաղաքի, Գալիա Մոշիլոր փողոցին վրայ գտնուող Վիեննական Մխիթարեան կալուածը, բազմադարեան շէնք մը, որուն ճակատին կարելի է տեսնել մինչեւ այսօր վասպուրականի Արծիւր, տակաւին բռնագրաւուած կը մնայ Լատին Արքեպիսկոպոսարանին կողմէ եւ ոչ ոք Մխիթարեան Միաբանութեան ղեկավարութենէն ճիգ կը թափէ այս բռնագրաւուած կալուածը ետ առնելու օրինական ամէն ճամբաներով: Այս անտարբերութիւնը ինքնին լուսագոյն պայցոցներէն մէկն է թէ ինչպէ՞ս Վատիկանը տակաւ առ տակաւ, գանազան ձեռքերով լուծարքի կ'ենթարկէ Մխիթարեան կալուածները, ի վերջոյ նոյն ընդհանրական լուծարքին ենթարկելու ամբողջ Միաբանութիւնը, ինչպէս որ եղաւ վախճանը Անտոնեան Միաբանութեան:

Բռնագրաւուած կը մնան նաեւ, Վիեննական Մխիթարեան Միաբանութեան Սերպիոյ, Նովի Սատ քաղաքի եկեղեցին ու եկամտաբեր կալուածները, որոնք գրաւուած էին Նախագահ Թիթոյի ժամանակ: Դժբախտաբար այդ կալուածները այսօր փլած են եւ հսկայ կալուածը վերածուած հանրային պարտէզի մը, ուր կանգուն կը մնայ միայն Հայ գորավարի մը արձանը որպէս հերոս, որովհետեւ կուտած էր Սերպական պատերազմին: Այս եկեղեցւոյ թանկարժէք իրերն ու գանձերը, ինչպէս նաեւ տոմարները կը զարդարեն այսօր Նովի Սատի եւ Պէլլրատի

ՀԱԽՈՒՄ

ԱԲԵՏԻՔ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ ԵՒ ԱՆԱՅԻՏ ԽԱՌԱՏԵԱՆԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՆԵՐ

Երեւանցի գրոսմայստեր Ալեքսիք Գրիգորեանը 2010 թ. Հայաստանի տղամարդկանց առաջնութեան աւարտից մէկ տուր առաջ նուաճեց հանրապետութեան ախոյեանի կոչումը: Նախափերջին 8-րդ տուրում նա գեղեցիկ ոճով յաղթեց Դաւիթ Քալաշեանին եւ վաստակելով 6,5 միաւոր անհասանելի դարձաւ իրեն հետապնդող Զաւէն Անդրէասեանի եւ Տիգրան Պետրոսեանի համար, որոնք իրենց ակտիւութեամբ ունեն 5-ական միաւոր եւ ներկայումս բաժանում են 2-3-րդ տեղերը: Նրանցից կէս միաւորով ետ են մնում Արտաշէն Մինասեանն ու Ռոբերտ Յովհաննիսեանը: Հենց նրանք էլ կը վիճարկեն մրցանակային միւս երկու տեղերը:



Հայաստանի շախմատի կանանց առաջնութեան վերջին տուրում իրադարձութիւններն անկանխատեսելի ընթացք ունեցան: Մրցաշարային աղիւսակը 5-5-ական միաւորով գլխաւորում էին Լիա Մարտիրոսեանն ու Սիրանուշ Անդրիասեանը եւ համարում էին ախոյեանուհու կոչման ամենաիրական լաւակնորդները:

Սակայն տեղի ունեցաւ անսպասելին. Լիա Մարտիրոսեանը գիջեց Աննա Հայրապետեանին: Վերջինս թէպէտ մասնակիցների թուում ամենաբարձր վարկանիշն ունեցող շախմատիստուհին է, շատ վատ հանդէս եկաւ Հայաստանի առաջնութիւնում՝ չարդարացնելով սպասելիքները: Ամենաանտրամաբանականը Սիրանուշի պարտութիւնն էր. թուում է՝ նա լաւ մարզավիճակում չէ, որ չկարողացաւ վերջին տուրում գոնէ ոչ-ոքի արձանագրել: Անահիտ Խառատեանը, պարտութեան մասնելով նրան, 6 միաւորով գլխաւորեց մրցաշարային աղիւսակը եւ հռչակեց Հայաստանի ախոյեանուհի: Նրան 5,5-ական միաւորով յաջորդեցին Լիա Մարտիրոսեանն ու Սիրանուշ Անդրիասեանը:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԴԵՊԻ ՈՒՐ

Շարունակում էք 15-էն

հասնիլ բարձր զարգացումի, ազնուանալ, ընտանիք կազմել, սիրել Հայրենիք ու Ազգ, ձգտիլ իտէպի մը իրականացման- այս բոլորի ըմբռնումը, բարի տենչը, անոնց համնելու փափաքը չէ որ կ'ունենան այդ «թեքնոլոճի»ն իր տրամադրութեան տակ ունեցողը: Ընդհակառակը...

Պարկէշտ, գոհաբեր, օգտակար, արժանապատիւ ու օրինակելի կեանք մը ունենալու հեռանկարը չէ, որ կը ներշնչէ ապագայ հօր ու մօր, ազգայինին, հայրենանուէրին ու մարդուն:

Այդ «ինթերնետ»ները չեն սորվեցներ, թէ ինչպէս պէտք է ապրիլ կեանքը: Ինչպէս պէտք է կազմել ընտանիք, դառնալ տիպար հայր ու մայր, ինքզինք գոհաբերել ընտանիքին, գաւակներուն, հօր ու մօր, ամուսինին ու կնոջ համար: Ինչպէս աշխատիլ, կրթել գաւակները, անքուն գիշերներ անցընել գաւակներու անարին: Ինչ եւ ինչպէս ընել որ պարկէշտ աշխատանքով կարելի ըլլայ բարեկեցութիւն ու նախանձելի կենցաղ ստեղծել ինքզինքին, ընտանիքին ու մերձաւորին համար:

Կը սորվեցնեն մանաւանդ... ամէն գնով ճոխ կեանք, նորոյթ եւ ինքնաշարժ, զգեստ ու զարդեղէն ունենալու սիրոյն ընել ինչ որ... պէտք չէ ընել: Աղախին, սուղ վայելք, զբօսապտոյտ ու պերճ բնակարան, դրամատան մէջ հարստութիւն ունենալու տենչով ոտքի տակ առնեն անուն ու համբաւ, վաճառել մինչեւ անգամ պատիւ:

Աշխարհը, մարդկութիւնը մոլորեցնողները տակաւ կը շարունակեն իրենց սարդիչ գործունէութիւնը, կը նուաստացնեն Ազգ եւ ժողովուրդը, Մարդ ու Հայրենիք:

Ասկէ մէկ քանի տարիներ առաջ, անոնց մէջ նորագոյն հնարքը, չարածնութիւնը կազմեց «Մատանայապաշտ» կոչուող աղանդին լոյս աշխարհ բերուիլը, որուն անդամ եղողը, մինչեւ իսկ հոգե-իմացական խանգարումի մասնուելով՝ վերջ

կու տայ իր կեանքին:

Այս աղանդին նպատակը հարուածել էր գործող կրօնները, քրիստոնէութիւնն ու իսլամը մասնաւորապէս: Առաջնորդներն ու հետեւողները ձեռքաւարեցան: Անոնք բանտ նետուեցան: Բայց ոչ երկար ատենի համար: Մարդու իրաւունքի կեղծ, շինծու եւ դաւադիր եւ սխալ հասկցումով լողունգի գործածութեամբ, յանցագործները ազատ ձգուեցան:

Անոնց ու իրենց նմաններուն ցարդ ունեցած ստոր ու քանդիչ գործունէութիւնը չբաւեց կարծես:

Խիստ վերջերս ծնունդ տրուեցաւ «E.M.O.» ըստած համաշխարհային կազմակերպութեան, որ թիրախ ընտրած է 13-17 տարեկան պատանի-երիտասարդները, որոնց յատկանիշն է՝ սեւագոյն համազգեստ կրել, մազերը սանրել գանտնք դէպի վեր ցցած, մարդկային կմախքը ընդունիլ խորհրդանիշ, դնել դիմակ որ մասամբ կը ծածկէ դէմքը:

Այս «նորածնունդ» կազմակերպութեան յարող անդամներուն նպատակը իբր թէ մեկուսանալ է բնական միջավայրէն, յարաբերիլ միայն «E.M.O.»ի անդամի հետ եւ դէմքին տալ տառապածի ու աշխարհէն հիասթափուած-զգուածի երեւոյթ, անձելով վիրաւորել մարմինին մասերը, արիւնել, եւ մտածել ինքնասպան ըլլալու մասին (ծնողք եղէք եւ դիմացէք եթէ կրնաք):

Ուշադրութեան արժանի պարագայ մը- «E.M.O.»ներուն տարիքը ըլլալու է 18-էն վար, որ իշխանութիւնները հիմք չունենայ կալանքի ենթարկելու գիրենք... դեռահասակ նկատելով...:

Այս Սատանայական կազմակերպութեան ղեկավարները ամէն բան կանխատեսած են...:

Կայ այն կարծիքը, որ այս կազմակերպութիւնը մէջտեղ բերուած է առաւելաբար արաբական երկիրներու երկսեռ պատանիները հարուածելու համար: Նաեւ՝ քաջալերելու միասեռականութիւնն եւ թմրեցուցիչի գործածութիւնը:

Նորահաս սերունդները բարո-

ՍՏԱՄՊՈՒԼԻ ԶԱՅ ԶԱՄԱՆՅՔԸ ԿԱՐՈՂ Է ԿԱՆԳՆԵԼ ԿԵՐԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ԱՌԱՋ

Շարունակում էք 6-էն

տանցիների խնդիրը պատեհ եւ անպատեհ առիթներով շահարկուած է թուրքիայի կողմից:

Իսկ ինչ վերաբերում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիրքորոշմանը, ապա բանախօսը նշեց, որ Էջմիածինը իրաւական լծակ չունի ընտրութիւնների վրայ ազդելու համար:

«Էջմիածինը որեւէ դիրքորոշում չի յայտարարել, միայն ողջունել է, որ պէտք է լինի աթոռակից պատրիարք եւ թեկնածուներից ոչ ոքի չի պաշտպանել»,- տեղեկացրեց Ռուբեն Մելքոնեանը:

«7 օր»-ի հարցին թէ, հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման առաւելել վերջացե՞լ է:

-Չեմ կարող ասել, թէ վերջացել է հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման առաւելել, կարող եմ ասել, որ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորումը թրքական կողմի ջանքերով մտել է որոշակի փակուղային վիճակի մէջ: Սա ի սկզբանէ կանխատեսելի էր, քանի որ թրքական կողմի նախապայմանների վրայ հիմնուած քաղաքականութիւնը, շարունակուելու դէպքում, փակուղի էր առաջացնելու: Այսօր ականատես ենք լինում այդ փակուղու նախանշաններին կամ նշաններին:

Վերջում նա տեղեկացրեց, որ թուրքիայում այսօրուայ դրութեամբ հաշուում են 42 հայկական եկեղեցիներ, որոնցից շատերը, սակայն, հոգեւոր առաջնորդներ չունենալու պատճառով չեն գործում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Շարունակում էք 6-էն

Ընկերակցութիւնը ակնկալում է վերոնշուած երկրների միջամտութիւնը Նիկոլ Փաշինեանի շուտափոյթ ազատ արձակելու խնդրում:

«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը յայտարարում է, որ Հայաստանի Հանրապետութեան եւ նրա քաղաքացիների համար գերակայ խնդիր է Սահմանադրական կարգի վերականգնումը, քաղաքացիների իրաւունքների եւ ազատութիւնների ապահովումն ու անվտանգութիւնը, դատական իշխանութիւնների անկախութիւնը, օրէնքի գերակայութեան ապահովումը, քաղաքացիների կողմից երկրի կառավարման ձեւաւորման իրաւունքի ամրագրումը:

«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը դիմում է Հայաստանի Հանրապետութեան բոլոր քաղաքացիներին, քաղաքական միաւորներին, հասարակական կազմակերպութիւններին համապիւռ Հայութեանը, կոչով՝ պայքարելու Նիկոլ Փաշինեանի նկատմամբ կատարուած անարդար դատ դատաւճռի բեկանման եւ նրա ազատման բոլոր գործընթացներին յանուն մեր բոլորիս ազատութեան եւ ապագայի յանուն Հայաստանի Հանրապետութեան:

«Հայ Քաղաքացիական Հասարակութիւն» Մարդու Իրաւունքների Պաշտպանութեան Ընկերակցութիւնը

յալքելու, հեռանկարէ գրկելու եւ դեռ յուսահատեցնելու դաւադրական ծրագիր մը գործադրուելու վրայ է օրերս՝ համաշխարհային գետնի վրայ:

Ապացոյցը վերջերս ցուցադրուող «Աշխարհի Կործանումը» (իբր թէ) կանխատեսող ֆիլմը մը (Նոյի Տապանի ու Սողոմ Գոմորի խառնուրդ եղող), որուն նպատակը երկրին երիտասարդութիւնը յոռետես

եւ աննպատակ դարձնել է, գիրենք ոգեւորող, միշտ բարձրացնող ու վե՛ս տեսիլքներու իրականացման առաջնորդող եւ մղող եռանդէ հեռացնել:

Թող չկարծուի սակայն, որ անկումային այս փրկիտիպաութիւնը իր տարածիչը չունի: Անձանօթ է հեղինակն ու նպատակը այս քարոզչութեան: Զանոնք պէտք է փնտռել ու տեսնել մանաւանդ «Ատուճոյ ընտրեալ ժողովուրդ»ին երկրին մէջ...:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ
ԵՆՈՒՄՍԱՏԵՍԻԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՈՐ
CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ
(ԿԼԵՆՏԷՆ, ՊԵՏՐՈՒՄ, ԼԱ ԶՐԵՄԵՆՈՒ)
ՅԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

### ՄԱՐԱԶԴ



**ԴՈԿՏ. ՓՐՈՑ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՐԵԱՆ**  
(Ծնեալ 1927 Հալէպ)

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մեր սիրելի ամուսնոյն, հօր, եղբօր, մեծ հօր եւ հարազատին ԴՈԿՏ. ՓՐՈՑ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՐԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 30 Յունուարի 2010ին:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Փետրուար 6, 2010, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ 500 S. Central Avenue, ապա թաղումը Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան մէջ:

**Սգակիրներ՝**  
Այրին՝ Անահիտ Խրլորեան-Սեղրակեան  
Դուստրը՝ Մարինէ Արմէն Յովհաննիսեան եւ որդին Տիգրան  
Դուստրը՝ Արփինէ եւ Արմէն Բէկլուեան եւ զաւակները  
Եղբայրը՝ Նորայր եւ Վիգի Խրլորեան եւ զաւակները  
Թոռնիկը Լուսինէ եւ Արիս Վարդանեան  
եւ համայն Խրլորեան, Սեղրակեան, Լուիսեան, Խշֆէճեան,  
Պէզճեան, Բամպակեան, Յովհաննիսեան, Բէկլուեան, Վարդանեան,  
Պետրոսեան, Զիւրբաշեան ընտանիքներ եւ հարազատներ:

### ԳԱՐԵԳԻՆ Ա. ՅՈՎԱՏՓԵԱՆՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Շաբաթուակուած էջ 14-էն

րին կեանքը օրինակ դառնար դրացի պետութեանց ժողովուրդներուն, «գի փայլեցցէ անուն եւ նկարագիր ժողովրդեանս»:

Վաթսուճամեայ Յոբելեան  
Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը հանդիսաւոր իրադրութեան մէջ նշեցին Կիլիկիոյ Շնորհազարդ Գարեգին Ա Յովսէփեան Կաթողիկոսի ծննդեան 80-րդ, գիտական գործունէութեան 60-րդ, եւ քահանայական ձեռնադրութեան 50-րդ տարեդարձները 1947 թուին: Ամենայն Հայոց Տ.Տ. Գէորգ Զ Կաթողիկոսը յատուկ Կոնդակով շնորհաւորած էր իր ողբերգ եղբայրը, սերնդակիցն ու դասակիցը ի Մայր Աթոռ, ուր երկու վաղեմի դասընկերներ ճակատագրականօրէն հասեր էին Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն դիրքերուն՝ ի սպասաւորութիւն Սուրբ Եկեղեցւոյ:  
Ամենայն Հայոց Հայրապետը աննախընթաց պատիւ մը կ'ընէր Գարեգին Կիլիկիոյ Հայրապետին, եւ «ի տրիտուր Զեր անձնական բարձր արժանիքներ, տալիս ենք Շնորհազարդութեանդ անձնական իրաւունք կրելու Զեր վեղարի վրայ աղամանդեայ խաչ, հաւատարմով որ դորանով Մենք ժողովրդի եւ հայ հոգեւորականութեան ցանկութեան արտայայտիչն ենք հանդիսանում»: Անձնական իրաւունքի առանձնաշնորհը յայտնապէս կը սահմանափակէր նման բացառիկ արտօնութիւն մը, վերապահելով վեղարի վրայ շողացող խաչին գործածութիւնը մի միայն Գարեգին Ա Յովսէփեան Կաթողիկոսին, եւ ոչ թէ յաջորդաբար Կիլիկիոյ կաթողիկոսներուն առ հասարակ: Յորեւիտ Հայրապետը կը յատկանշուէր այլապէս նաեւ

որպէս «եկեղեցաշէն», «հայրենասէր», «առաքինի եւ շիտակ եկեղեցական», յայտնի՝ գիտական օտարազգի շրջանակներուն մէջ: «Ղարաբաղի սիգապանձ լեռներ յայ կորովի գաւազը», ինչպէս գրեր էին յայտնի խմբագիրներ, շրջեր էր աշխարհի չորս ցամաքամասերը, տալով ինչ որ անձ մը չէր կրնար տալ իր բովանդակ կեանքի ընթացքին:

Յորեւիտական հանդիսութիւնները տեղի կ'ունենային Պէյրութի Ամերիկեան Համալսարանի ժողովասրահին մէջ 1947 Յունուար 12-ին, ուր գլխաւոր բանախօսներէն մին կ'ըլլար Երուսաղէմի Կիւրեղ Բ Պատրիարքի ներկայացուցիչը՝ Լուսարարապետ Եղիշէ Վարդապետ Տէրտէրեան (Եղիվարդ): Յորեւիտական հանդիսութիւնները արձագանք գտան նաեւ Պելճիքայի մէջ ուր բիւզանդագէտ Հանրի Կրեկուար, Պելճիքայի Արքայական Ակադեմիոյ նախագահը, ի պատիւ Գարեգին Հայրապետի ճառ մը արտասանած է, հաստատելով որ «Զեզի հետ է ամբողջ համալսարանական եւ ազգայնական Պելճիքան երբ այսօր մեծ աստիճանաւոր մը կը մեծարէք, յանձին Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանցի որ դպրութեան մարդ մըն է եւ եկեղեցւոյ մարդ մը, եւ տակաւին գիտութեանց մարդ մը, խորունկ եւ նուրբ ճանաչող մը ձեր ազգային արուեստին»: Ականաւոր բիւզանդագէտը՝ Հ. Կրեկուար, յորեւիտ Հայրապետին մէջ կը ճանչնար «համաշխարհային արժէք ունեցող հերոս» մը, որ Գերմանիա ուսանեցաւ «բեղուն տարիներ եւ դարձաւ նշանաւոր գրելով իր գիտական աւարտածառը «Միակամութեան վարդապետութեան ծագման մասին», գերմաներէն լեզուով, զոր հրատարակեց Լայպցիգի մէջ 1897 թուին:

### ԱՐԱՍ ՍԵՓԵԹՅԱՆ ՊԱՐԳԵԿԱՏՐՈՒԵՑԱԿ

Շաբաթուակուած էջ 15-էն

քերով դնահատեց յորեւիտի գրական վաստակը, յատկապէս ընդգծելով «Մեր Գրականութեան գանձարանին մէջ դրած էք մնայուն արժէքներ, որպէս արժանաւոր գաւազ մեր ազգին»: Այնուհետեւ յայտարարեց որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս, ընդառաջելով Յովնան Արք.ի ԹՄՄ-ի եւ Հ.Բ.Լ.Մ.ի խնդրանքի օրուան յորեւիտը կը պարգեւատրուի «Ս.Սահակ եւ Ս. Մեսրոպ» շքանշանով: Ներկաներու որոտնդոտ ծափե-

րուն ներքեւ Արամ Սեփեթեանի լամբակը զարդարեց վերոյիշեալ շքանշանով եւ տիկ. Մելինէին ալ տուաւ համապատասխան յիշատակի զարդակոճակ մը:

Շնորհակալական ջերմ խօսքերով հանդէս եկաւ Արամ Սեփեթեան եւ իր երախտագիտութիւնը յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Թ.Մ.Մ.ին, Հ.Բ.Լ.Մ.ին եւ սոյն միջոցառումին իրենց բաժինը բերող բոլոր մասնակիցներուն:

Գ. Մ.

### ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԵՂՎՅՐՆԵՐՈՒ

Շաբաթուակուած էջ 7-էն

ները պահպանելու նիւթը շարունակելով, կարճ ելոյթ ունեցան նախկին ուսուցիչ Դոկտոր Մինաս Գոճայեան: Ան հարց տուաւ թէ ուր անհետացան Մելգոնեանի մատենադարանի բազմաթիւ արժէքաւոր մատենաները, պատերը զարդարող թանկարժէք իւղանկարները, օրինակ՝ մեծանուն գծագրիչ Մելգոնեանցի Յակոբ Յակոբեանի գործերը, եւ ուրիշ շատ մը հարստութիւններ:

Ելոյթ ունենալու առիթ տրուեցաւ նաեւ վարժարանի նախկին սան պրն. Մեսրոպ Թաշճեանին: Մեսրոպ Թաշճեան, կրթական մշակ ըլլալու կողքին, ունեցած է նաեւ երաժշտական յաջողութիւններ, հրապարակելով մի քանի ձայնասկզբներ: Ան նախ կատարեց երգ մը՝ «Փոքրիկ Տղան», որ ստրված էր Մելգոնեանի մէջ, ապա բոլոր ներկաներուն նուիրեց իր ձայնասկզբաւանկէն մէկական օրինակ, ինչորեւիտ որ ստացողները նուիրատուութիւն մը կատարեն Մելգոնեան Սանուց եւ Բարեկամներ Միութեան:

Հոգեճաշ հանդիսութիւնը փակուեցաւ պրն. Զօհրապ Շամմասեանի ելոյթով: Պրն. Շամմասեան իր Մելգոնեան Աշխարհասփիւռ Սանուց Միութիւններու մամուլի համագործըն է, յայտնեց թէ աշխարհի տարբեր երկիրներու մէջ այժմ լուրջ աշխատանքներ կը տարուին, հայ հարուստ գործատէրերու կողմէ, Եւրոպայէն, Ռուսաստ-

տանէն եւ Հայաստանէն, Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը վերաբանալու հարցը: Ի դէպ, «Այբ» Կրթական Հիմնադրամի քննարկման նիւթ եղած է Մելգոնեան Հաստատութիւնը եւ մշակած են անոր վերաբացման հայեցակարգ: «Այբ» Կրթական Հիմնարկը այսօր Երեւանի մերձակայքին մէջ ծրագրած է հիմնել կրթական լրիւ աւան մը ուր պիտի յաճախեն 800 աշակերտներ եւ այս նպատակին համար հանգանակուած է քառասուն եօթ միլիոն Ամերիկեան տոլար: Նմանօրինակ հաստատութիւն մը հիմնելու ծրագրին մէջ նկատի ունին Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը, հաշուի առնելով անոր աշխարհագրական մերձակայութիւնը Եւրոպայի, Միջին Արեւելի եւ Հայաստանի որ ապագային պիտի դառնայ խորհրդանիշը Հայրենիքի եւ Սփիւռքի Միասնութեան: «Այբ» Կրթական Հիմնարկը յարաբերութեան մէջ մտած է արդէն ՀԲԸՄ կեդրոնին հետ համաձայնութեան մը գալու միտքով: Պրն. Շամմասեան նշեց թէ թէեւ Մելգոնեանի աշխարհացրիւ սանուցները ունեցան կարգ մը ձախողութիւններ, բայց պէտք է վհատիլ, միշտ պէտք է հաւատք, յոյս եւ երազ ունենալ մեր նպատակին հասնելու համար ու ձգտիլ մեր վարժարանի «Լուսոյ անշէջ վառարանի» վերաբացման:

Մելգոնեանցիները ամբապնդուած ու վերանորոգ յանձնառութեամբ հեռացան սրահէն:

### Ո՞Վ ՊԻՏԻ ՊԱՅՊԱՆԵ

Շաբաթուակուած էջ 17-էն

քաղաքներու թանգարանները. Ո՞վ պիտի պահանջէ:  
Նոյնքան տփոզն է դարձեալ, Վիեննական Միլիթարեան Միաբանութեան Եգիպտոսի Գահիրէ քաղաքին, Հելլոպոլիս արուարձանին մէջ գտնուող Միլիթարեան վարժարանը, որ կառուցել տուած էր հանգուցեալ

Հ. Բարսեղ Ֆէրհաթեան եւ ուր ժամանակին սերունդներ դաստիարակուած էին Եգիպտոսի փառքի օրերուն: Այդ դպրոցը այսօր կը մնայ Կաթողիկէ Լատի Արքեպիսկոպոսարանին ձեռքը, անուանական չնչին վարձքով մը: Անձանօթ կը մնայ նաեւ ճակատագիրը, Արաքսի Համբարեանին կողմէ կտակով Միլիթարեան Հայրերուն փոխանցուած կալուածնէն

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91107  
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով:  
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

# EVERY DAY LOW PRICES

*Unbeatable deals! Huge selection!*

<b>1800 Tequila</b> Reposado or Silver <b>\$16<sup>99</sup></b> 	<b>Absolut Vodka</b> <b>\$13<sup>99</sup></b> 	<b>Absolut Vodka 100 Proof</b> <b>\$11<sup>99</sup></b> 	<b>Cabo Wabo Tequila Silver</b> <b>\$19<sup>99</sup></b> 	<b>Fortune Vodka</b> <b>\$16<sup>99</sup></b> 
<b>Grey Goose Vodka</b> <b>\$21<sup>99</sup></b> 	<b>Russian Standard Vodka</b> <b>\$10<sup>99</sup></b> 	<b>Putinka Vodka</b> <b>\$8<sup>99</sup></b> 	<b>Ciroc Vodka</b> <b>\$16<sup>99</sup></b> 	<b>Stolichnaya Elite Vodka</b> <b>\$40<sup>99</sup></b> 
<b>Nuvo Sparkling Liqueur</b> <b>\$19<sup>99</sup></b> 	<b>Patron Silver Tequila</b> <b>\$29<sup>99</sup></b> 	<b>Cazadores Reposado Tequila</b> <b>\$19<sup>99</sup></b> 	<b>Sauza Tequila Gold or Blanco</b> <b>\$7<sup>99</sup></b> 	<b>Frida Kahlo Blanco Tequila</b> <b>\$24<sup>99</sup></b> 
<b>Frida Kahlo Reposado Tequila</b> <b>\$39<sup>99</sup></b> 	<b>Dewar's 12 Years Whisky</b> <b>\$16<sup>99</sup></b> 	<b>Don Julio 1942 Tequila</b> <b>\$79<sup>99</sup></b> 	<b>Remy Martin XO Cognac</b> <b>\$94<sup>99</sup></b> 	<b>Johnnie Walker Gold Label</b> <b>\$44<sup>99</sup></b> 
<b>Johnnie Walker Blue Label</b> <b>\$114<sup>99</sup></b> 	<b>Johnnie Walker Black Label</b> <b>\$18<sup>99</sup></b> 	<b>Jack Daniel's Old No.7 Whiskey</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>Jacques Cardin VSOP Cognac</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>Tres Generaciones Anejo Tequila</b> <b>\$29<sup>99</sup></b> 
<b>Tres Generaciones Blanco Tequila</b> <b>\$27<sup>99</sup></b> 	<b>Hennessy VSOP Cognac</b> <b>\$31<sup>99</sup></b> 	<b>Crown Royal Canadian Whisky</b> <b>\$12<sup>99</sup></b> 	<b>Chivas Regal 12 Years Whisky</b> <b>\$15<sup>99</sup></b> 	<b>Putinka Vodka Limited Edition</b> <b>\$24<sup>99</sup></b> 
<b>Gantous &amp; Abou Raad Arak</b> <b>\$11<sup>49</sup></b> 	<b>Johnnie Walker Black 100th Anniv.</b> <b>\$39<sup>99</sup></b> 	<b>Severka Luxe Vodka 1.0L</b> <b>\$7<sup>99</sup></b> 	<b>D Los Altos Silver Tequila</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>El Charro Reposado Tequila 1.0L w/ free 375ml</b> <b>\$19<sup>99</sup></b> 
<b>Chaya Silver Tequila</b> <b>\$19<sup>99</sup></b> 	<b>Nemiroff Lex Vodka</b> <b>\$28<sup>99</sup></b> 	<b>Grand Old Parr 12 Years Whisky</b> <b>\$29<sup>99</sup></b> 	<b>Ruskova Vodka 1.75L</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>Noy 7 Years Armenian Brandy</b> <b>\$21<sup>99</sup></b> 
<b>Robert Mondavi Private Selection Cabernet Sauvignon</b> <b>\$6<sup>99</sup></b> 	<b>X-Rated Liqueur</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>Vernashen Semi-Sweet Wine</b> <b>\$5<sup>99</sup></b> 	<b>Finlandia Vodka</b> <b>\$14<sup>99</sup></b> 	<b>Tisdale Assorted Varietals</b> <b>\$1<sup>99</sup></b> 
<b>Jermuk Armenian Mineral Water 500ml</b> <b>89¢</b> 	<b>Gerolsteiner Natural Mineral Water 1.0L</b> <b>89¢</b> 	<b>Heineken 12-Pack (12 Fl. Oz. Bottles)</b> <b>\$11<sup>99</sup></b> 	<b>Corona Extra 12-Pack (12 Fl. Oz. Bottles)</b> <b>\$11<sup>99</sup></b> 	<b>Carlsberg 12-Pack (12 Fl. Oz. Bottles)</b> <b>\$10<sup>99</sup></b> 

1785 E. Washington Blvd.  
 Pasadena, CA 91104  
 (626) 794-7026  
 Open Monday—Saturday  
 9 am - 8 pm



825 W. Glenoaks Blvd.  
 Glendale, CA 91202  
 (818) 242-0683  
 Open Monday—Saturday  
 9 am - 8 pm

\*This ad expires on 02/14/10 • 12 or more bottles Mix & Match • We reserve the right to limit quantities • Sales tax excluded • Prices subject to change without notice • No CC's  
 All items are 750ml in size unless specified.